


20049

891.99-192

W-71



89199-102

Մ 71
u. m

Մ. ՄԻՆԱՍԵԱՆ

Իրոքը պատկերապես ներկայացնում է
հայերեն լեզվի վրա գրված բոլոր
պատկերները: Ամբողջ: 1/152 թ.թ. 1917
1 6 8 10

ՀԱՅԻ ՎԱՐԻԸ

1097

ԱՅՏԵՑԻՆ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐ ԱՅՆ

2648

Ե Ր Գ Ե Ր



Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան «ՀԷՐՄԷՍ», Գրաճակայա № 6.

1913

ՄԱՁԴԻՈ

Այս հրատարակութիւնը հայ ազգին
կընծայեմ անարժան է բոլորովին
լոյս կըտամ ինձի պէս անուսումներին
Հինի պատկեր նրանց այս հայի վարքը:

Ձարգացած մարդուն հազար երանի
Իւր սրտի խորքերից խօսի անուանի
Ամեն մի գրուածքին մարգարիտ շարի
Տես որպիսի խակ է այս հայի վարքը:

Դու մատաղ հասակիդ գիտեցիր յարգը
Ծոյլ չի մնաս գնա ուսումնարանը,
Որ աշխատես բարի գոհ մնայ ազգը
Շնորհք լինի բեզի այս հայի վարքը:

Նարեկ



ՈՎ ՍԻՐՈՒՆ

Հաւատում եմ կատարածին դու կը հասնես ով սիրուն
Պերճախօս ես զարմանք կուտաս ամեն ազգին ով
սիրուն

Քո անունը տարածուել է ընդհանուրին ով սիրուն
Զ'կայ քեզ պէս հին ախոյեան ընդունակ ես ով
սիրուն:

Անարժան եմ քո շնորհին, սիրով բորբոքուած եմ ես
Վաղուց 'ի վեր ռահ ցոյցների աշխատանքն եմ
գովում ես

Աճիւններին պատիւ տալու յարգել սիրով պար-
տեմ ես

Դիւանական գիտութիւնը փայլեց մեզի ով սիրուն:

Յորդորանքներ կարգալ պարտինք զաւակներուս համոզել
Սէր հարազատ հայրենիքին հոգով կարժէ աշխատ' ի
Դրոշմելիս թարմ սրտերում որքան մեծնան ա-
ճեցնել

Լուսարանել հարկաւոր է քո թախիժը ով սիրուն:

Յաջողութեամբ գնա առաջ մեր սրտերում տարածուի,
Նրա գաղափարը պարզ է ամեն մի հայ սանձարուի
Գործէ որքան ուժը հասնի ցանկացածին աշխատի
Մի օր հասնի մեզ աւետիք գալի բարի ով սիրուն:

Երիտասարդներին կոչենք ցոյց տան առոյգ դէմքերը,
Վառ պահելով սրտերի մէջ հայրենիքի պատկերը
Բախտ կը բերէ ժամանակը թող ցնծան դըժ-
բախտները

Լիայոյս ենք, որ կը փայլէ արուսեակը ով սիրուն:

Ղեկավարել հարկաւոր է անպայման համոզուած ենք,
Հնդհանրութեան օգտին վայել միշտ պիտի գործ
ունենանք

Սուր հայեցող լինելու ենք, օտարից խորհուրդ
պահենք

Զըլլայ թէ մեզ արգելք դառնայ քո տեսութիւնն
ով սիրուն:

Արարիչը լինի պաշտպան պահէ մեզ զերծ փորձանքից,
Ուղղենք մեր խիղճ, հանգիստ պահենք, որ գըտ-
նուած ենք մեղսակից

Նենգութիւնը ձգենք մի կողմ հաւասարուենք
ազգակից

Զի ուշանար այնուհետեւ կը գայ մեզ լուր ով
սիրուն:

Փրկութեան մեր փականքները մօտեցած է բացուելուն,
Թշուառներիս մունդ տուող բախտի կապանք
քանդուելուն,

Հիասթափուենք չի մնանք քուն, արշալոյսի բաց-
ուելուն

Այն շողշողուն գուարթ օրը վայելենք մենք ով
սիրուն:

Որքան հերոս և գործիչներ աշխատեցան այս օրուան,
Որքան քաջեր արիւնշախաղ տապալուեցան այս
անուան

Արեան գոյնով ներկուած լինեն դաշտեր, ձորեր
այս օրուան

Զի կարելի հաշիւ տալը որքան լինել ով սիրուն:

Խրատուենք մենք բաւական է ճանչնանք մեզի մաշողին
Զի խոնարհուենք այսուհետեւ պատասխանենք
տանջողին

Մեր փրկութեան օրագիրը կախուած է մեզնից
միայն,

Շատ դժուար է մարդկութիւնը միացնել իզուր
ով սիրուն:

Այս ամենը մեր սեպհական պարտաճանաչութիւնն է,
Հոյսը թագուստի տալ խաւար ֆնալ յիմարութիւն է
Գաղափարը Տիրոջ պարգևն է վերջը հաշիւ տալ
կ'ուզէ

Շարունակէ ճանապարհդ ուղիդ շարժէ ով սիրուն:

Կեանքը միայն քաղցր տեսնես առողջութեան միջոցին,
Եթէ ցաւօք լեցուած լինես կանիծես դու քո
կեանքին

Ինչ օգուտ, երբոր թշուառ շխթայուած կաս բանտի
խորքին

Երբ աղատուես ազատ շունչդ շատ թանգ կարժէ
ով սիրուն:

Ամեն անգամ խօսիլ ինչ պէտք, չէ որ մարդ ես իմացիր,
Սխալներդ ճանչնալ պարտիս խոստովանէ զղջացիր,
Արդարութիւն սիրել պէտք է չարիքից զգուշացիր
Որ յաւիտեան արքայութեան արժանանաս ով
սիրուն:

Նարեկ, Սաղմոս, ինչ գիրք ասես ուղղութիւն կը քարոզէ,
Աւետարանի մէջ ըսուած աչքիդ առաջ գերան է,
Ուրիշների շիղջ տեսնել այդ մի անշնորհք բան է
Մեղայ գոչեմ ինձ համար է արի իմ հոգեակ սիրուն:



ԾԵՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆԸ

Պու ես նախորդ մեր սիրելին սքանչելի հրեշտակ
Քո շնորհից զրկուած եմ ես պաղատում եմ բա-
ցարձակ

Սխալուել եմ չի յարգողներ, որ ծածկուել ես
ամպի տակ

Տեսնեմ վարագոյրի տակից քո տեսութիւնն ով
սիրուն:

Աներևոյթ մի զօրութիւն տուեց այս սէրն նուէր,
Որ մաշում եմ, իզուր կեանքս փնտռւ է սիրտս աւեր
Չես իմանում նպատակս չարչարում եմ օտարներ
Անօգնական փնայած եմ արի իմ աղնիւ սիրուն:

Շնորհք ունիմ կեանքս զոհել քո նշոյլին իմ լուսին
Բաւական է գիշերուան մէջ ֆնալ, եկ լուսաբացին
Երկար եղաւ քո պտոյտը չեմ համբերիլ իմ անգին
Սփռէ չորս կողմ ճառագայթդ, լոյսդ, տեսնենք
ով սիրուն:

Նոր գարուն է իմ եղբայրներ ձեզ կաւետեմ սիրելիք,
Շարժենք գաղափարով առաջ և բաց անենք լսելիք
Կանաչ, դալար գեղեցիկ օր չ'ինայենք ընելիք
Ծեր թէ մանուկ զգուշանան պատրաստ լինենք
ով սիրուն:

Արեւ լոյսիցը կանհետանան փոքրիկ աստղիկներ
Հորիզոնից հալածուելով քաշուեն մի կողմ ամ-
պիկներ
Հասաւ գարունն զարթեն քնից բողբոջանան ծաղ-
կունքներ
Պարտէզներից անուշ հոտեր կ'ստանանք մենք ով
սիրուն:

Կենդանութիւն կը պարգևեա լոյսդ սփռած տեղերին
Զուրկ չեա թողնում մինչդեռ ստուերիդ տակ
զտնուած բոյսերին,
Հիանալի տեսարանիդ տան ողջոյն կը խոնարհուին
Եկ բոցավառ անշէջ հուր իմ սրտիս մէջը ով
սիրուն:

Յանկալի է տեսութիւնդ մորմորւում եմ քեզ համար,
Շնորհք արա լուր աղերսիս, որքան շուտ գաս ինձ
համար,
Խնայիր իմ ծաղիկ կեանքս, որ մաշում եմ քեզ
համար
Կեանքիս թելը կտրուելու է ալ յոյս չունիմ ով
սիրուն:

Ուրախ օրեր չեմ վայելեր քանի դու բացակայ ես,
Զօր ու գիշերն միևնոյն է խնճոյքներից փախչիմ ես
Արարչի տուած կեանքը ինչով փոխարինեմ ես
Անշամանդաղ լոյսիդ կարօտ մնացած եմ ով սիրուն:

Հիւժեմ միշտ քեզ իմ աղանեսակ հասիր քո կարօ-
տեալիդ,
Որ պարտութեան տակ չի մնայ ազատ շունջ տայ
տենչալիդ
Բաւական է այսքան մնալ միշտ սպասել Անահիտ
Տխուր դէմքերնիս զուարթացուր տուր ցնծութիւն-
ով սիրուն:

Թշուառ ծնայ աշխարհիս մէջ չի հասայ իմ փափագին
Զի յաջողուեց որ դին դառնամ ափսոս իմ աշխա-
տանքին
Օտարներին գերի դարձած զիջելով ամեն մէկին,
Վատնուեց արդար իմ բաժինս կորուստ դնաց
ով սիրուն:

Իրաւունքի տէրն է արդար երբ լինի տեղը դառնայ
Սուրբ գրքերի օրինակն է երբէք պարապ չի մնայ
Քանդողի տունը կը քանդուի նորից մեզ բան
կը մնայ
Թէ մեր ցաւեր աչքի առաջ առնենք, զգանք, ով
սիրուն:

Հիւսեալ եմք մենք սերտ կապերով սիրոյդ համար
բորբոքում,
Աղէտալի դէպքերի մէջ գլորվում ենք տառապուած
Քո սէրը մեզ սփոփանք է թէև այժմ անշատուած
Մի օր լինի պայծառ դէմքդ ցոյց տաս մեզի ով
սիրուն:

Նարեկ գիրքը դժուարիմաց գրաբառներով լի է,
Հեղինակը սուրբն Գրիգորը Նարեկացի է
Շարականն ալ յօրինողը Ներսէս Շնորհալիս է
Ցոյց են տուել նրանք մեզի սէր է Աստուած, ով
սիրուն:



Ջ Ա Ր Բ Ա Ղ Դ

Ջեմ կարող քեզանից երբէք հեռանալ
Միշտ սրտիս անկիւնում թագ կաս իմ անգին,
Գիշեր ցորեկ քո ցաւօք եմ գրգռուել .
Չունիմ գանգատ վիճակուած է իմ բախտին:
Անթիւ չարչարանքիս հաշիւն է կորած
չազար ու մէկ միջոցին ապաւինած,
'ի սէր մարդկայնութեան եմ յոյսը դրած
Ստանալու համար պահանջն իմ բախտին:
Բախ լինելու օգնող բարեկամ չունիմ
Խղճով վառուող անգին դրացի չունիմ,
Անգութ մարդուց արդէն ես վաստակ չունիմ
Ստիպուած եմ ապաւինել իմ բախտին:
Բարութիւն մնալուց շատ սխալուեցայ
Մինչև որ դարիս պահանջն իմացայ,
Գարունը չի տեսած ձմեռուան հասայ
Այս էր պակաս հասաւ դիցուկ իմ բախտին:
Անիրաւը կը հալածէ խեղճերին
Քաջ գիտէ իրենը, որ է ստորին,
Օրենք է՝ սպանել հմուտ ծառային
Այս կերպով է փոխաբերում իմ բախտին:
Խորհեցի, այս իժը շատ թոյն կը տեղայ
Ինչպէս նշաններից հաստատ կերենայ
Ազատուելու փախչիմ յետքիս պիտի գայ,
Թէ որ հասնի կը վերագրեմ իմ բախտին:
Տիրոջ պահած հօտին գազան չի դաշիր
Որքան գայլին բաժին դառնայ չի պակսիր
Չուտ հաշիւը վերապահուած է գիտցիր
Յարենք այս «Նարեկի» կոչին չար բախտին:

ՀԱՅՐԵՆԻՔ

Հայրենիքը քաղցր կը թուայ մարդուս
Թէ քարոտ մինչդեռ լինի ան հովանի
Բնութեան գաղտնիքն է ցանկանալ մարդուս
Որքան դժնիկ փշով պատած էլ լինի:
Արմատից կը պարզուի ամեն պտուղը
Որ իր ժամանակին կը ցոյց տայ ձեռ,
Եթէ լաւ խնամես հասցնես ջուրը
Չի չորանայ հիւթը առողջ կը լինի:

Յոյս ունիմ հասնելու իմ նպատակիս
Աշխատանօք, ոչ թէ լոկ խօսք եմ տալիս,
Բոլոր ուժս զոհեմ չեմ սխալուել ես
Շարունակեմ ճամբան օձեր էլ լինի:

Բամիկն էլ կը փնտրէ ծննդավայրը
Գիտունն ալ կը պահպանէ իր քարայրը,
Դրախտի հետ չի տար փոքր պարտէզը
Եթէ որ օդը ջուրը օգտակար լինի:

Երջանկութեան յետքից միշտ պիտի վազեմ
Թէ որ հասնիմ հարկաւ օգուտ պիտ քաղեմ,
'ի հարկէ շատ արիւն քրտինք պիտի թափեմ
Հէնց դարիս պահանջն է գժուար էլ լինի:

Նուիրուած է մեզ նեղութիւն սկզբից
Վերջ չի տրուած, որ ազատութիւնը տանջանքից,
Կեանքիս գոյքիս անապահով հոգսերից
Ազատուելու միջոց նայինք երբ լինի:

Իմ սուրբ իրաւունքից զրկուած կուրացած
Հալու մաշ եմ եղած մինչև վաստակած,
Պապս, մամս, ինձ համար են պատրաստած
Ետ դարձ իրաւունքս, որ արդար լինի:

Քեզ եմ յիշում երազիս մէջ քնիս մէջ
Չես մոռացուի նկարուած կաս սրտիս մէջ,
Բախտաւոր եմ եթէ հանգչեմ ծոցիդ մէջ
«Նարեկիս» փափազը հատուած կը լինի:



Ա Չ Գ Ա Ս Է Ր

Ազգին բարի ցանկացողներ ինչէ այսօր ձեր տալացուն
Ձի հեռանալ հայրենիքից որքան նեղ օր մատնուեն լացուն,
Մեր նախնիքներ կաթով, մեղրով չեն անցկացրած լեր զգայուն
Պարգեկել են մեզ օգուտներ այսօր յիշատակ թողուած ենք:

Ձաւակ բարի հանդիսանալ խօսքով միայն չենք լինելու
Մեր բնիկ երկիրը սուրբ է պարտ ենք ազգասէր լինելու,
Ներկուած է հայու արիւնով գէթ պարապ տեղ չէ լինելու
Նահատակների սուրբ արեանց արգեամբք յիշատակ թող-
ուած ենք:

Գիտակցութիւն չունեցողը չի ցանկայ այս հրաւերին,
Երազ կը կարծի իրենք չի ճանաչէ՝ չարն ու բարին
Միայն նպատակը ապրել, արեն դառնայ լրանայ տարին
Ձի յիշում թէ մեր սուրբ հաւատին, ազգին աւանդ թողուած ենք:

Ազգիդ կրօնիդ թէ հաստատ չըլնիս՝ ապա դու ինչ մարդ ես
Երկսեռից մին չըլնի գիտցիր հասարակութիւնից դուրս ես
Հոգով մարմնով թշուառ կըլնիս կ'խղճամ ամսոսում եմ ես
Բիւրաւոր մարտիրոսների արդեամբք յիշատակ թողուած ենք:

Սիրելու ենք մեր կրօնը, ազգութիւնը, սուրբ հաւատը
Սիրով կրենք չի սխալուենք բերնից դուրս տալ մեր գանգատը,
Թէ հարկ լինի հաւատին, ազգին, զոհուել ամեն անհատը
Պարտաւոր է հանդիսանալ այնու համար մենք թողուած ենք:

Է օրինակ մեր Փրկիչը, որ մեզ համար խաչ բարձրացաւ
Վերջին կաթիլ սուրբ արիւնը մերոյ փրկութեան բամուկեցաւ
Ձէ պէտք ուրիշ օրինակ, այսքանով խնդիրը պարզուեցաւ
Այս է պատճառ, որ մեր Տիրոջմէ մենք յիշատակ թողուած ենք:

Րամիկ է այն անձը, որ նա չէ ազգասէր, կրօնասէր
Մոլոր մի արարած նա ոչ կենդանի ոչ էլ անձնատէր
Ձէ ընդունակ ազգին համար ոչ ալ իրեն հաւատին տէր
Անարժան ես ճիշտ դու «Նարեկ» ինչու համար որ թողուած ենք:

ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

Այբն է առաջին վերջինը բոլոր տիեզերաց տէր,
Բեն գիրն է երկրորդ անձը որ ինքն մեզ հաղորդեց
սէր

Գիմ տառն է վերջ երրեակ սուրբ հոգին մխրթարիչն
մեր,

Հէնց նա մեր տէրն է ամենուս, որ աշխարհ գալով
զինաւ:

Բնաւ միտքդ չի պղտորես սկզբին և վերջինին,
Նախ Հայր Աստուած անուանում ենք մի էակ է ան-
սահման,

Որդին Աստուած եկաւ աշխարհ մեզ գերութեան ա-
զատման,

Յորդանան գետ մկրտուելով Սուրբ Հոգին գլխուն
հանգեաւ:

Գովաբանելու արժան ես Մայր Աստուծոյ Տիրամայր,
Խոնարհաբար խնդիր ունիմ որդուդ սուրբ արեան
համար:

Չարժէ աշխարհիս փառքերը լեր բարեխօս մեզ համար,
Մի թողուր՝ բաց խեղճ «Նարեկին» փրկէ Սուրբ
արեամբ նովաւ:



ԳԻՈԹԱՆԻ

Մի տրտնջար եղբայր որ մեղը մերն է
Առիթ չի տանք վատ օրերի չի ընկնենք,
Չենք արթնցած վաղ է ժամանակ կ'ուզէ
Մեր եղպրտանց լացն ու կոծը չի լսենք:

Մտածելու միշոց չես տայ ընկերիդ
Որ ան ալ ընկած է քո սարքած դերիդ
Ենթարկել ես վտանգի դու քոյ հոգիդ
Չաւակներուս հալածանքը չի լսենք:

Մեր կեանքի օրերնին ձախորդ և դառը
Չի յաջողուիր անցնել այս բարձր սարը
Միշոցներին դիմենք չի հասած ժամը
Չբարձրանանք մինչ ոտքի ձայն չի լսենք:

Մեր մէջ շատ պակաս է սէր ասուած բառը
Եղբայրասիրութիւն կոչուած բարբառը
Այս քնացքով պիտի գնանք վատթարը
Նորից փորձեր աղաղակներ չի լսենք:

Մեզ շղթայուած տեսնան բկից կոկորդից,
Շունչ տալու թոյլ չեն տայ քթից բերանից
Տարաբախտ արթնացան ոստիներ քնից
Զինուած սպասում են նշմար չի լսենք:

Մեր փորձերից խաբուած մնացինք չարը,
Օրեցօր կը վատնուենք կը մտնենք խորը
Փոքր առուակի մէջ կարնուենք ուռկանը
Թանգ է բնական մահ միթէ չի լսենք:

Մեզ համար բուրն էլ դարձեր է մեծ սար
Ոչ մի կողմից չեղաւ պատիւ հաւասար
Մարդկութիւնը մոռցած կը վարուեն խիստ չար
Սպառնում են վերջ տալ ինչո՞ւ չի լսենք:

Միամիտ դասերը խելքի չեն գալիս,
 Ազգայնականներին հանդէս դուրս գալիս
 Չեն արթնցած մեզի վնաս են տալիս
 Գտնենք հաշիւը, որ սարսափ չի լսենք:
 Մենք ձրիակերներին թէկ պարտ չունինք,
 Օր աւուր ապրելու միջոց էլ չունինք
 Տեմնելով մեր կեանքին միջնորդող չունինք,
 Դրութիւննիս վատ է տագնապ չի լսենք:
 Մեծ հաշիւ է այս խօսքերս օրինակ
 Ձի կայ մի կենդանի անտէր ընդունակ,
 Աւետիք տայ որե է մի սուրհանդակ
 Հնչէ չորս կողմից փող սխալ չի լսենք:
 Միտքս խառնուած կը յորդորեմ խեղճերին
 Հակառակ չեմ ճամբայ առնէ տակաւին,
 Բիւրաւոր զոհ գետին պիտի տապալուին,
 Երկրից երկինս արեան բողոք չի լսենք:
 Մեր վերքերնին մենք լանք, թող օտարներին
 Այսքան գտնուած յեղափոխականներին
 Չենք կարող հասկացնել միամիտներին,
 Եղբայրսպանութեան ձայներ չի լսենք:
 Մեր գործերնին սխալ, իսկ ուղիղ գիտենք,
 Ո՞ր մէկ անարդարի հաշիւը դիտենք
 Ձիկայ ժամանակ թէ արդարը գտնենք
 Ում ինչ հաշիւն է թէ գանգատ չի լսենք:
 Մեղաւոր մարդոցը արդար են դատում,
 Ինչո՞ւ արդարի ծոց փող է պակասում
 Պատուագուրկ ընելը մեղք է են ասում
 Ձի ստունանայ մի գառնութիւն չի լսենք:
 Մաքուր գործ ենք, սուրբ գործը չի պղտորենք
 Մեր ձեռք մեր կեանքը չի համառօտենք,
 Պատճառ կընինք բարութիւնից կը զրկուենք,
 Խնդրում է «Նարեկը» վատ բան չի լսենք:

ՈՒ ՆՍՁԱՆԻ

Ուր մնացիր իմ սիրելիս իմ ցանկալի նոր գարուն
 Երբ այցելես մեր աշխարհին, որ դարձնես մեզի բարուն,
 Առատօրէն տուր անձրևներ ցօղէ կարօտ դաշտերուն
 Ծլեն ծաղիկն ծաղիկները տուր զօրութիւն անտառներուն:
 Վանէ մեզնից ցուրտ ձմեռը ուժ չի մնաց դիմանանք
 Պարպուկեց պաշարներիս ալ ինչ սպառնալիք իմանանք,
 Աւետէ մեզ քո գալուստը փառաւորուենք զօրանանք
 Թող արևն հալածէ մեր մառախլապատ ամպերուն:

Նորոգութեան կը փոխարկուեն տերևաթափ ծառները,
 Կը զարդարուեն երբոր կը ծագէ պայծառ արեգակը
 Երևան գան մացառներից անուշահոտ ծաղիկները
 Շրջան ընէ մեր արևը այցելէ արօտներուն:

Այսքան հազար տարիների շրջանի մէջ յարգուած ես
 Չորս եղանակների փառքն ես մարտի վերջերն փայլած ես,
 Ընդհանուր աշխարհին աջակցութիւնդ շնորհած ես,
 Թէ արարածք և թէ բոյսեր քեզմով կ'ազդուրուեն
 գարուն:

Չօրութիւնդ կը շտապեցնէ լուռ մունջ հոսող գիտերին
 Բլուրներից արագ թափուեն զով ջրերը ողջունելով
 մարգերին
 Տաքացնում է քառանկիւնը զարգացնէ հովիտներին
 Մալու չէ ոչ մի անկիւն կուտաս սնունդ բոյսերուն:

Այցելութեանդ կըսպասեն վարդ մանիշակ պալատան,
Որ պտոյտ գայ ցոլէ իրենց արեգակն անման :
Շարժեն սողունք ձկափոխուն պարտէզներ շքեղանան,
Ախորժելի դէմքով տես վարդին երգող սոխակներուն:

Նոր յաղթանակ կըտաս ձմրան կը զօրացնես երկիրը
Անուշ բուրեն սարեր բժշկուեն վիրաւորեալները,
Մի ուշանար այցելէ կ'սպասեն կարօտեալները
Միակ յոյսերս դու ես խղճայ քո հարազատներին:

Իմ անարժան չոր երգերս կը շարագրեմ քո սիրոյն,
Շատ ցաւալի վիճակի մէջ կը տապալուենք ինքնուրոյն
Արդարութիւնն վերացած է կեանք չէ Աստրծոյ սիրոյն,
Ո՞վ նազանի կանչում է «Նարեկը» քեզի եկ գարուն:



Ա Ն Ա Ր Դ Ա Ր

Անարդարի խիղճը արդէն մեռած է,
Ինչ որ կուգէ կանէ խորհուրդ առած է
Ձեղծումները շատ է, հոգին սառած է,
Միջոցներ կը փնտրէ որ արդարանայ:
Նա շատ անհամբեր է երբէք դադար չէ
Միշտ խիղճը կը խայթէ ներսըն հանդարտ չէ,
Ամենի խօսքերուն իրաւ կը կանչէ
Իրա նման չարին գտնի տիրանայ:

Արեւից կը փախչի չի փնտրէ լուսին
Ստուերներ կորոնէ դառնալով կրկին,
Համոզածին կաշխատէ իր թակարդին
Մէջ առնելուց վերջը նա կ'արդարանայ:

Բամիկ դասակարգի մարդկանց յետեից
Կերթայ ձև կը դարձնէ իրեն համարից
Մինչև խեղճը ճանչնայ անփորձ վտանգից,
Ձի կարող հեռանալ, որ հանգստանայ:

Դարանի մէջ մտած որսին կ'սպասէ
Ճգնաւոր պատահի կասէ մեծ պաս է,
Հմուտ գործի տէր է փողից պակաս է
Դրամատէրերին ընկեր կը դառնայ:

Այս աշխարհիս մէջ նկատուած արդարը
Կրակի բաժին է խօսած է տէրը,
Անհաշիւ չէ, կորել չի գլխու հերը,
Արդար դատաստանէն վճիռ կ'ստանայ:

Քէակցիային հետևողներն անթիւ են
Ձեն կարող ազատուել հարկաւ կը պատժուեն
«Նարեկի» խօսածը թերի կը կարծուեն
Փամանակ գալու է, որ իրականայ:

ԱՅԺՄԵԱՆ ԿԵԱՆՔՍ

Ախ մեր ներկայ դրութեան մէջ չ'կայ ցանկալի օրեր,
Կը տւեն սուղ մեզի համար չի ճարուի ուրախ ժամեր,
Որքան որ կաշխատիսնոր առաջ կը գան կերպ-կերպ ցաւեր
Այժմեան կեանքս խոստանում է միշտ դառնութիւն
սիրելիս:

Յաւել բերաւոր ցաւ կսկիծ վշտեր զանազան
Թողուած ենք դաշտի միջում անհովիւ ոչխարի նման
Պատրաստ է մեզ ամեն ժամ շատ թշուառութիւն
ընթանան,
Լուրջ դիտողութիւն ունենանք կեանք փրկելու սիրելիս:

Ժլատ հարուստները թող իմանան իրենց ընթացքը,
Եղբօրը խաբել է խեղճը տնքում է պարտքին տակը
Նիւթապէս սպառուած չի կարող պաշտպանելու կեաքը,
Ճնշուած անգոր է չունի ընդունակութիւն սիրելիս:

Մեր այս նեղ վիճակի մէջ մնալու պատճառը մենք ենք,
Օտարների ընդդիմութեան ինչու մեղաւոր կասենք,
Որ մեր չքւոր եղբօր կարօտի հոգսերը կը քաշենք
Չենք ցանկանում երբէք ձեռնհաս լինելու սիրելիս:

Երկրագնդի Տէրը մի է ստեղծող ամեն մէկին,
Սիրելու ենք մեր եղբօրը չանարգենք ոչ մէկին
Պատուէ և հնազանդ է գործի առաջ լինող ղեկին,
Մի լինիլ կեղծ քարուքանդի առիթ դառնալ սիրելիս:

Աշխարհիս մէջ կապրենք, բայց թէ ինչն է մեր նպատակը,
Կենդանիներին տեսնում ենք կայ լաւը և թէ վատը,
Կը վերաբերուի մենք մարդիկ փնտրենք մեզ ընդունակը
Ազատութեան յետքը գտնենք մեր հանճարով սիրելիս:

Նոյն իսկ չէ մոռացուել մեր արարքը զիրար թակել է,
Եթէ մէկը սխալուել է միւսը արդէն յարգուել է
Կարծես սխալը չի ուղղուի, որ նա միշտ անարգուել է
Մեր մէջ բարօրութեան ոգին չէ ներշնչում սիրելիս:

Կեանքերնիս վտանգուած դարձեր ենք ամենուն խաղալիք,
Երբէք հոգսերից ազատ չենք փոքր ինչ շունչ առնէինք
Չունենք օգնական թէ սիրտ առնէինք մխիթարուէինք,
Չի շուարուենք ձեռք ձեռքի տալ ոտք ելնելու սիրելիս:

Երբէք յուսահատուիլ չի վայելեր մեր պանդխտութեան
Ուղղելով սխալներնիս գնանք դէպի արդարութեան
Մի օր կը լինի, որ բացուի մեզ դուռն ողորմութեան,
Աւետեաց երկիր կը դառնայ հայրենիքը սիրելիս:

Այս դառն օրերը երբ հեռանայ խաղաղ կը դառնայ
Թերահաւատ դասակարգի մարդը, նոյն ժամ իմանայ,
Չի հաւատում այժմ մեռածի դասումն է չ'իմանայ
Չէ կենդանի նա անպէտք մի արձան է սիրելիս:

Նահատակներ շատ ունեցանք մայրենի հողի վրայ,
Դեռ շատ քաջեր զոհ կրգնան այս սուրբ գործի անուան վրայ,
Մարդիկներ կան անտարբեր են միայն իր օգտի վերայ
Ազգին ցեց են հայ բարբառը պատժէ նրանց սիրելիս:

Քեզանից չ'լսեմ եղբայր իմ այս նոր գանգատները
Չի վայելեր հայի անուան կիմանայ նկատողը,
Տես այսքան հարիւրաւոր քաջներին արիւն թափողը,
Բարի անուններն անմահ կը մնայ միշտ սիրելիս:

Սէրը սուրբ է մօտիկ չի գայ սաղայելը խաբողը
Տէրն է միշտ մեզ փորձանքներից հեռու ազատ պահողը,
Կը յորդորէ խեղճ «Նարեկը» այս սուրբ գործին օգնողը
Դատաստանին պարգերես է չի ամաչեր սիրելիս:



Մ Լ Ա Ո Ղ

(Փռն օղլու եղանակ)

Միացէք եղբայրներ նոր ուժ կազմեցէք,
Թշնամու դէմ զինուած կարգաւ շարուեցէք
Նրբ հարկն ստիպէ խիստ դիմադրեցէք
Թող ճանչնան Հայկազնեան քաջագործութիւնն:

Հաւ գիտեն մեզի, որ փոքր ոգիներ չենք,
Հինգ հարիւր տարուէ վեր մեզի մոռցել չենք
Մեզ հետ պատուով վարուողին խնայել չենք,
Յոյց տուած ենք շնորհք և ծառայութիւնն:

Ազնիւ խօսք ճանչնալով մենք հաւատացինք,
Թէ նա մեր վերքերին տայ սպեղանիք,
Բայց մլտող կատուից չի լինի բարիք
Հաւ փորձով իմացանք կեղծաւորութիւնն:

Ով ուզում է լինի թէ խօսքին տէր չէ,
Նրա վերջը չիկայ հիման վրայ չէ
Աւազին դրած շէնքը մնալու չէ,
Խաւար մարդը չի դարձներ ուշադրութիւնն:

Հօղանջեց զանգերը ամբողջ հայրենիք,
Արեան լիճ է դարձած դիակները լիք
«Նարեկը» անգութին եղած խաղալիք
Միշտ չի մնայ կը փայլէ արդարութիւնն:



ՍԱՎ ԴԵՔԱՐ

Միրով վառուած իմ անուշ աղաւնեակ,
Ինձ մխիթարէ դու սիրուն թռչնակ
Ուր ես փակուած ես, իմ անգին խօսնակ,
Գովեստդ կարդամ լինիմ սավդաքար:

Ամեն առաւօտ ձայնդ իմանամ,
Կարօտեալ տեսքիդ ինչպէս դիմանամ
Քաղցր խօսքերուդ ես կը զարմանամ,
Քո հնչումներին եղայ սավդաքար:

Վառվռուն աչքերուդ խիստ կարօտ եմ,
Քո ծըլվրոցի ախր կը քաշեմ
Խիստ փափագովդ կեանքս կը մաշեմ
Միշտ մտքիս առաջ դառայ սավդաքար:

Դէմքդ տեսնողի շուտ սիրտը կապուի,
Կօշիկներ թողած հետքիցդ վազի
Կեր ու խում չ'անի ծարաւ պապագի,
Իւր կեանքից անցած կըլնի սավդաքար:

Ամեն պարտիզում քեզ որոնելիս,
Աչքերս յառած միշտ արտասուելիս
Գիշերն անհանգիստ քեզ մտածելիս,
Յուսով կ'սպասեմ եղէ սավդաքար:

Քանի պարտէզներ լի են ծաղկներով,
 Վայելուչ դիրքով շամամ հոտերով
 Ծառները բացուած իւր տերէններով,
 Սոխակը վարդին եղած սավղաքար:

Առաւօտ եղաւ ուր ես իմ տատրակ,
 Ձայնիկիդ մեռնիմ խօսա իմ թուլակ
 Գոյնդ նախշուն է կարմիր կապուտակ,
 Տեսնողը քեզի կըլնի սավղաքար:

Բաֆֆին համակրանք տուեց այս գործին,
 Ձարթեցրեց Հայր Ալիշեան բոլորին
 Ազգութիւնն յարգող անմահ կղերին,
 Ճանաչեց «Նարեկ» եղաւ սավղաքար:



Ղ Օ Շ Մ Ա Յ

Պատրաստուէք իշխաններ ողջոյնի կացէք,
 Արքայական հրովարտակն եկաւ
 Յարգանօք պատուէրին լաւ ականջ դրէք
 Ամենազեղեցիկ չքնաղս եկաւ:

Խնճոյքնիս ձև տոնէ ճրագներ փայլին,
 Ծառայութեան հարկադրուողներ սթափուին
 Գաւաթները յոյժ լի խմիչքներ դարձնին
 Հոգսերի հալածման ժամանակն եկաւ:

Գեվհերին հոգսերից երբէք ազատ չէր,
 Աշխարհիս մէջ նպատակին հասած չէր
 Այս բերկրանքով իր եռանդը տեսած չէր,
 Ճանաչեց իր ցաւի դեղ դարմանն եկաւ:

Թ. Ն.



Լ Ս Ե Մ Չ Ի Լ Ս Ե Մ

Լսելու արժան համարէ թող ինձի վատը

Զոկիր խօսքերիցս լաւը դարձնես բեզի օգուտը
Անկեղծ մարդը դիւր է ինձի նա է իմ սրտիս զարդը,
Գաղտնիք չի տաս կեղծաւորին կառնէ քեզի թակարդը
Լսեմ չի լսեմ մեր կոյր արարքին թէ ինչ պակասի
Պղատօնին ուր գտնեմ, որ կանչէ ձեզ յարմար դասի:

Սիրտս վառուած բորբոքում է լեցուած է ներսիս դին հուր
Ամեն մէկ օր ձախորդութիւն կիմանամ անյաջող լուր
Եղբայր եղբօրը մատնում է տես որքան խելքից թիւր
Այսպիսով կմանք թշուառ ինչ կաշխատեն ի դուր.
Լսեմ չի լսեմ մեր կոյր արարքին թէ ինչ պակասի
Պղատօնին ուր գտնեմ, որ կանչէ ձեզ յարմար դասի:

Երջանկութեան յարգը այժմ ճանաչելը դժուար չէ
Թէպէտ այսքան նեղ օր տեսի բայց նորից բաւական չէ
Քանի անուսում ենք դեռ մեզ սրտին ալ դիւրական չէ
Զարթեմ թող մեր մտքերը դարձ այժմ շատ խաւար չէ
Լսեմ չի լսեմ մեր կոյր արարքին թէ ինչ պակասի
Պղատօնին ուր գտնեմ, որ կանչէ ձեզ յարմար դասի:

Մեր հաւատը ազգն ու լեզուն մեր պատիւն է մեր փառքն է
Նախնեաց վարքը գոյութիւնը պաշտպանիլը մեր
պարտքն է
Փնտրելով ազգի կորուստը ձեռք բերել մեր պարծանքն է,
Աստանդական շուար մնալ եղբայր եղբօր զրկանքն է.
Լսեմ չի լսեմ մեր կոյր արարքին թէ ինչ պակասի
Պղատօնին ուր գտնեմ, որ կանչէ ձեզ յարմար դասի:

Հարամիտ և մատնիչները թող հեռանան ասպարէզից
Մոլի վարքերով խոստացած ճանաչենք թշնամուն կից
Արդար պատիժ կըստանայ ո՞վ որ ազգին չէ կարեկից
Անզգամներ շատ ունինք մենք չի ջոկուի լաւը վատից
Լսեմ չի լսեմ մեր կոյր արարքին թէ ինչ պակասի
Պղատօնին ուր գտնեմ, որ կանչէ ձեզ յարմար դասի:

Ի՞նչու լռեմ քանի տեսնեմ մեր աշխարհը քանդեցին
Այն մեծ քաղաքներից Անին մեզ օրինակ թողուցին
Ամբողջ Հայաստանն աւերակ և անճրագ թող տըւին
Մեր որթերը մեզ հետ են բան չի մնաց խանգարեցին
Լսեմ չի լսեմ մեր կոյր արարքին թէ ինչ պակասի
Պղատօնին ուր գտնեմ, որ կանչէ ձեզ յարմար դասի:

Լաւ է, որ մենք հայի անուն չի կրենք այնքան ցաւ չէ
Քանի նենգ սրտով խաբենք ազգին խօ կորուստը մի
հաւ չէ,

Կը ծախես ազգդ այլոց նպատակդ դաւդ ինչ է
Յուդաներ կան մէջերնիս, որ Արարիչը նրանց տէր չէ
Լսեմ չի լսեմ մեր կոյր արարքին թէ ինչ պակասի
Պղատօնին ուր գտնեմ, որ կանչէ ձեզ յարմար դասի:

Սրտացաւօք գանգատում եմ մեր ցաւերը շատ շատ են
Թէ որ ուսման չը հետեւենք մեր զրութիւնը վատ են
Փրկութեան դուռը ուսումն է աշխատեցէք լոյս առնեն
Նոր սերունդներով պարծենանք չը վհատուին յոյս առնեն
Լսեմ չի լսեմ մեր կոյր արարքին թէ ինչ պակասի
Պղատօնին ուր գտնեմ, որ կանչէ ձեզ յարմար դասի:

Երկու ճանապարհով հասան ուրիշ ազգերը վայրենի
Մին ուսումն է, մին միութիւն տարաւ փառքին հայրենի

Չունէին կարգ և ոչ կանոն երկիրները ամայի
 Ողջ աշխարհը նրանց ձեռքն է կարօտ չեն մամոնայի,
 Հսեմ չի լսեմ մեր կոյր արարքին թէ ինչ պակասի
 Պղատօնին ուր գտնեմ, որ կանչէ ձեզ յարմար դասի:

Միութեան սէրը մեր սրտերում, որպէս արեգակ ծագի
 Կը զօրանանք մեծ ուժ կառնենք արտասունքն իս ցամաքի
 Համբերէ հայր խորտակուած նաւը ինչպէս տի սարքի
 Ով դու «Նարեկ» շատ զրոյցով լեզուդ ծարաւ պապագի,
 Հսեմ չի լսեմ մեր կոյր արարքին թէ ինչ պակասի
 Պղատօնին ուր գտնեմ, որ կանչէ ձեզ յարմար դասի:



ԽԱԿ Է ԶԷ ՀԱՍԱԾ

Խորհեցի շատ մեր մէջ չկայ բարութիւն,
 Մեզի հարց տան կասենք չունինք վատութիւն
 Խելքից դուրս է կանենք անհամբերութիւն
 Այս պատճառի կասեն խակ է չէ հասած:

Ամեն ինչ իր չափն ու սահմանը ունի,
 Տհաս պտուղը իր ճաշակը չունի
 Երբոր մէկմը բեզ հետ ոչինչ գործ չունի
 Մի դէմ առնի չասեն խակ է չէ հասած:

Կարողութեան հաշուով շարժիլն յարգի է
 Թէ որ չափը կորցնես ամօթալի է
 Կանոնաւոր ապրելն յոյժ պաշտելի է
 Եղիւր զգուշ չասեն խակ է չէ հասած:

Էր երանի այն ինչ հայուն զգալի
 Որ իր խիղճը անհանգիստ է ցաւօք լի
 Ազգայնական հոգով լեցուած սիրալի
 Չեն կարող ըսել թէ խակ է չէ հասած:

Հարամիտ մարդիկներ բազմացան մեր մէջ,
 Իրենց եսը յաւելուած է գործի մէջ
 Մինչև չ'ուղղուի չի մտնի կարգի մէջ
 Արժան է ըսուելու խակ է չէ հասած:

Էինք մենք հաշտ բայց ոչ երկար ժամանակ,
 Չի մոռանանք ըսել մեր հին ընդունակ
 Ամենքս վարժապետ ով նստի յատակ
 Սխալուած չեն կ'ասեն խակ է չէ հասած:

Հայոց իշխանների գլուխն ծանրացած
Գործերուն չեն նայի իբրև կուրացած
Սրիկաների ձեռքին խաղալիք դարձած
Տանջուում է հայ ազգը խակ է չէ հասած:

Այս դէպքերին համբերելը փաստ է
Մենակ լեզուաւ ազգասէրն հա կասէ,
Ազգային լուծն տանողը պակաս է
Ճիշտ է որ ըսուում է խակ է չէ հասած:

Սպառուիլը մեր գործերից կերևնայ
Եթէ ծառը չի խնամես չորանայ
Զրդշալը անօգուտ աչքդ կուրանայ
Համոզուիր ըսելու խակ է չէ հասած

Անզգայ չի լինինք որդիքները հայկայ
Փոխել չարը բարուն մեզի պատուէր կայ
Խակ պտուղը խնամքով հասունանայ
Ուղղղենք մեզի չասին խակ է չէ հասած:

Ծանօթացինք*) լրագրներից բացը
Բանակուիւ է միշտ իրար հետ փորձը
Անմիաբան ժողովն վերջ չի տայ հարցը
«Նարեկ» բո երգերն ալ խակ է չէ հասած:



*) Լրագրներից ժամանակին «Գործի» և «Մշակի» իրարու
դէմ բանակուիւ:

ՄԻ ՆԵՂԱՆԱ

Մարդկութիւն ասուում է ամեն բարիքին,
Աշխատելիս առաջն առնել չարիքին
Կատարեալ և զգօն մարդու վարմունքին
Հետևիր և սիրտ տուր դու մի նեղանայ:

Ինչ փորձանքներ եկաւ հասաւ մեր գլխին,
Արժան եղան շատ անմեղներ դժոխքին
Դարձ գան մեղաւորները գնան դրախտին
Փոփոխ է աշխարհըր դու մի նեղանայ:

Նոր գաղափար անուանելով կը յարգեն
Հին մարդոցը բանին պէտք չէ կանարգեն
Հագուտը հին պատիւ չունի կը կատակեն
Եւրոպական ձեն է դու մի նեղանայ:

Երիտասարդ դասին յոյս պիտի դնենք,
Յարմար ուժի նրանց չափով բուն դնենք
Անկատար ուսումով գործ կը խանգարենք
Առաքինի վարքից դու մի նեղանայ:

Ղեկավարը շարժի անհոգ իւր գործին
Զրասոյց կը լինի նաւը ի հարկին
Անփորձներին գործի առաջ մղեցին
Թէ ազնիւ մարդ լինի դու մի նեղանայ:

Անտանելի ցաւերի մէջ խրուած ենք
 Անմիաբան աստանդական ցրուած ենք
 Կրօնի ու ազգութեան վրայ հիմնուած ենք
 Ամբարիշտներ շատ են դու մի նեղանայ:

Ներեցէք խօսքերուս պատասխան տուէք
 Անհիմ շէնքը մնալու չէ լաւ գիտէք
 Կրօնուրացին երկնքից լուր բերէք
 Կեղծ է ազգութիւնն էլ դու մի նեղանայ:

Անհակամիտ մարդը կուենայ կրօնք
 Սուրբ կը պահէ ազգութիւնն ալ յարգանք
 Քու հաշիւդ չի լրանայ արտորնօք
 «Նարեկ» համբերապարտ դու մի նեղանայ:



ՄԱՐԻԸ ՓՈՂՈՎ

Մեր սովորութեան համաձայն պատուում ենք փողատէրին
 Գլուխը խելքով լեցուն ճանչնալով յարգոյատէրին
 Որ թէ խօսի թիւր համոզուած ենք այս դրամատէրին
 Բաւական է, որ փող ունի յարգի է մարդը փողով:

Աշխարհիս մէջ ամենայն ինչ փողով է լաւ իմացիր
 Փողդ պարպուած անարժան ես գերեզմանին մտածիր
 Թէ որ ապրիս շատ տարիներ այս աշխարհը գիտացիր
 Հարկաւոր է փող ունենալ յարգի է մարդը փողով:

Բախացուցիչ ծանօթ է մեզ ճարուիլ չի անփող մի բան
 Ոչ մի նիստում երես չունի մունջ է անփողի բերանն
 Ծոցը լեցուն փողով յիմարն ունենայ ուսին գերան
 Անփող իմաստունը անյարգ պատուով է մարդը փողով:

Դռնապանին պատուէր կայ թէ բաց անէ փողատէրին
 Անփող մարդը չի մտնի ներս նեղացնէ մեծաւորին
 Կասէ Աւետարանն փրկուիլը դժուար է մեծատունին
 Բայց աղբատին ինչ տեղիք տալ յարգի է մարդը փողով:

Ընկերասէր բարեխիղճ մարդը չի գիտնայ փողի յարգը
 Նա իր ուղին կանցնի առաջ չի ճանաչեր փողի փառքը
 Գովաբանեն տեսնողներ դասեն իմաստունի շարքը
 Վաղ դարձ կուգայ համոզուել թէ յարգի է մարդը փողով:

Փողապաշտ մարդիկներին հարիւր անգամ խօսես խրատ.
Նա իւր վարքից ետ չի մնայ տանեն ձ'զեն խորխորատ,
Թէկուզ հաստատ գիտնայ թէ անփող պիտի գնայ դրախտ
Կ'ասէ դատաւորի քօղն է, յարգի է մարդը փողով:

Ոչ մի ատէն լսած չեմ բամբասուելիւ փողատէրին
Դիզած հազարներիցը զոհ է քան իմ հարիւրներին,
Ճիշտի կը վերածեն սուտը վայ անփող մեղաւորին
Ասպարէզ կը դուրս գայ անմեղ յարգի է մարդը փողով:

Ղեկը ձեռին բռնած է, որ գործը առաջ ընթանայ
Արժանաւոր հարուստներ կան ազնուութիւն խոստանայ,
Թէ ամենքը վատ լինեն աղքատներն ապրել չեն կրնայ
Ազնիւ հարուստներն ողջ լինեն յարգի է մարդը փողով:

Ունայն աշխարհիս ինչին սիրտ կապեն, որ յարգեն փողի
Քանի արժան ենք մահուան ժանիքին և թէ սև հողի,
Ապա աշխատիր բարիքներ թողուլ անուն անմահի
Ազգիդ պարծանաց յիշուիլ թէ յարգի է մարդը փողով:

Վնասակար «Նարեկ» ազգիդ չունիս տալու մի տաղանդ
Փողատէր չես զոհ ես բանիմ հարիւր հազարներ աւանդ,
Քանիմ չոր երգերուդ կարօտել չեմ ընծայեն հաւատ
Առանց փողի ինչին պէտք իս, յարգի է մարդը փողով:



Ա Ջ Ն Ի Ի

(Սէմայի)

Արի իմ ազնիւ ընկերս վերջացնենք մեր մէջ առարկան
Որքան մանր հաշուի մտնենք վէճ կը յարուցուի տարրական,
Լաւ է ուղղենք սխալներնիս օրինակուենք մենք հանրական
Ձեռք չի մէկնէ մեր թշնամին կեանք ունենանք կուտուրական
Տեսնես սիրոյդ գերի դարձած խղճա դու քո հարազատին
Գիտեն դժբախտներուս կեանքէն վերջ տան իրաւ արդար դատին:

Ձուր տեղ ինչու չարչարուում ենք տեսնես թշնամու օտրքածը
Վտանգներ շատ պատահելիս գլորվում ենք միշտ արկածը,
Դիմենք խոհմութեան այժմ ծուռ է անիւի դարձուածը
Յայտնի է դեռ ժամանակ կայ դարձանուելու չէ հարւածը.
Տեսնես սիրոյդ գերի դարձած խղճա դու քո հարազատին
Գիտեն դժբախտներուս կեանքէն վերջ տան իրաւ արդար դատին:

Նսեմացաւ մեր անունը համարեա ոտքի տակ ընկաւ
Դարևոր վաստակած համբաւ ափսոս բերնէ բերան ընկաւ,
Աշխարհիս մէջ դժուրակ վատթար կեանքը մեղ բաժին ընկաւ
Մոռնալ չեմ աղամանդեայ մատանիս անգին ծոփն ընկաւ
Տեսնես սիրոյդ գերի դարձած խղճա դու քո հարազատին
Գիտեն դժբախտներուս կեանքէն վերջ տան իրաւ արդար դատին:

Իմ ազնիւ ընկերս դու ես, բայց քեզանից անվստահ եմ
Խորհուրդ տալու չեմ օտարին քեզանից անբաւական եմ,
Կուզեմ վարուիմ անկեղծ սրտով, իսկ քեզանից ես յոյս չունեմ
Մեղքերս կը խոստովանիմ պարզ գիտցիր ուրիշ մեղք չունիմ.
Տեսնես սիրոյդ գերի դարձած խղճա դու քո հարազատին
Գիտեն դժբախտներուս կեանքէն վերջ տան իրաւ արդար դատին:

Հիւժեայ միշտ ես քո սիրովը բաժանուելս է անհնար
Հաշտուիլ իմ ընկերս ազնիւ ածիր հայրենիքին ընար,
Մատաղ սերունդներն զմայլեն թէ սխալ լինի ինձ տան հնար
Խղճուկ չՆարեկն եմ ես վարպետ չեմ թէ խօսիմ դառնաբար
Տեսնես սիրոյդ գերի դարձած խղճա դու քո հարազատին
Գիտեն դժբախտներուս կեանքէն վերջ տան իրաւ արդար դատին:

Հ Ի Ն Վ Է Ր Ք

Հայրենիքիս սիրոյ համար թափառական գնում եմ

Հոգով մարմնով եմ խորայոյզ հին վերքերով օրհնում եմ
Այդպիսի կեանք ինձ է տրուած չունին ոչ ոք յիշում եմ
Անդարմանելի վերքերով ստեղծել ես հով Աստուած:

Ինչու ֆամ ալսքան պանդուխտ յիմարն էլ կը մտածէ
Փրկութեան մի յոյս էլ չըկայ դժբախտութիւն տիրած է
Յուսահատւած ֆացած եմ բոլոր յոյսս կորած է
Հասիր դու ինձ մարդասէր Տէր գթա խեղճիս հով Աստուած:

Նորոգվում է հին վերքերս ուժասպառ եմ ինչ անեմ
Օգնող չեղան ոչ մի կողմից յառած աչքերս թաց կանեմ,
Մեղաւոր եմ ես լաւ գիտեմ կապաշխարհւմ լաց կանեմ
Գթառատ Տէր տառապեալիս մի ճար հասիր հով Աստուած:

Վիզս ծռած լուռ եմ կացել չի յարգուեցաւ խօսքերս
Անխիղճների ձեռքը մատնուած թառամեցաւ պատկերս,
Յիմար կուսանքների նման վաղ մարեցաւ լապտերս
Բաց քո ողորմութեան դուռը աղերսում ենք հով Աստուած:

Եւրոպացոց մեծ մարդկանցը աչքերնին հեռադիտակ
Տեսան մեր վերքերը խղճացին ամենքը շարունակ,
Բայց գործի մէջ երբոր մտան կոչեցին անընդունակ
Իրենց շահին միայն պաշտպան օգնող չեղաւ մեզ Աստուած:

Համայնապէս դիմեցինք թէ մի հնար մեր վերքերին
Յոյց տուեցին ճամբայ փշոտ մի ելք չիկայ տակաւին,
Այնքան արիւններ հոսեց որ մայրենի հող շաղախուին
Բաւ է վերջ տուր հին վերքերին ազատէ մեզ հով Աստուած:

Քանդուեցին բոլոր կապերը ինչպէս դժուար ձեռք բերուած
Ձի ֆացին ոչ մի գաղտնիք թշնամուն դարան լարուած
Վասակ կեղծաւորներ շատ են և խիստ փողին են գերուած
Այս է «Նարեկի» հին վերքը փրկէ իսպառ հով Աստուած:

միամեծաշա մօծողը ճառարած ձիւկնայց մ ճգանք
միամեծ ճգար մի ճոցնա ճառարած որ ճիւղնայց
միամեծ ճգար մի ճոցնա միամեծ ճգար մի ճոցնա
միամեծ ճգար մի ճոցնա միամեծ ճգար մի ճոցնա

Վ Ե Ր Ջ Ի Ն Խ Օ Ս Բ

Վերջին խօսք կանչում եմ բարեխիղճներին եմ ուղղելիս
Ամբողջ տետրիս մէջ գրուածի մտքերն է ամփոփելիս,
Մեր սրտերի ներսում հին ցաւն ու խոցն է տարածելիս
Մարդուս ազնիւ պարտքն է ցոյց տալ միայն արդարութիւնը:

Եւ գալիս դուրս թափուում է յայտնի է ամանից ջուրը
Բնածին ազդեղ զօրութիւնը կրակը հուրը,
Ջրցելու իրաւն բռնի դնեն կոկորդին սուրը
Խոստովանի կեանք փրկելու համար արդարութիւնը:

Բոպէ չեմ անցկացնի շատ կարճ է իմ համբերութիւնս
Պարզն ասած յարգում եմ բոլոր ուժով իմ ազգութիւնս,
Կրօնն անձեռնմխելի թող խօսես վատութիւնս
Մարդուս պարտականութիւնն է ճանչնալ արդարութիւնը:

Ջերմաձայն կոչում եմ ամբողջ զգայուն ընկերներին
Ձի խուսաբուեն զիրարմէ թող միանան հեղեղներին,
Հազարներով ձեռք է ձեռք տուած վիթխարի գետերին
Յաղթելով անցկացածին փրկել է արդարութիւնը:

Իրաւ է, որ ես խօսած եմ անկրօնի հասցէին
Գուցէ համոզմունքը լինի թող ճանաչէ Բուդդաին
Անկրօնի կեանքը թշուառ շուտ կը բռնուի հրդեհին,
Նա անհիմ է կորուստին տայ շուտով արդարութիւնը:

Նոր երիտասարդներ մեր անփորձ ինտելիգենտներին
Հազիւ կարող է ծանօթանալ քանիմ վէպիկներին,
Եւրոպական ձև է ծախում չէ արժան տակտիկային
Գործի գլուխն անցած խանգարում է արդարութիւնը:

Խոնարհ և բարեխիղճ նկատուած գործօն պաշտօնեային
Յանձնեցիր դու համոզուած ամբողջ մի ազգի բանալին,
Առիթից օգտուելուն ուրախ է այն է զարմանալին
Վեհանձնութեամբ կուրցած կորսնցնում է արդարութիւնը:

Օրինակներին կարօտ չենք Րաֆֆիի գրուածներին
Տեսնես ուղիղ մարգարիտ է շարած ամեն տողերին
Զոհուած է նա ազգին համար զոռ տալով իր ուղեղին
Անմահ անուն թողեց ազգին ճանչնանք արդարութիւնը:

Սէր միութիւն չիկայ մեր մէջ ունիմ գանգատ այս մասին
Սէր բառի մէջ քաղցրութիւն կայ տես օրինակ փեթակին,
Ժողովելով ծաղիկներից հիւթը միութեամբ կաշխատին
Աշխատանաց արդիւնք ցոյց տայ մեզի արդարութիւնը:

Քաղցրագործ մեղուի պէս եթէ աշխատես դու հիվ «Նարեկ»
Գերդաստանիդ ապրուստը հեշտ կը հայթայթես դու Նարեկ
Երգչի կարգը չես մտնելու ով դու անուսում Նարեկ
Բանի որ անկարող ես լսեցնելու արդարութիւնը:



Ս Ո Ւ Ն Կ

Սիրուն սոխակ ինչ ես տխրում
Տեսնում եմ կեանքդ եղկելի,
Գիշեր ցորեկն ես հառաչում
Փշոտ վարդն է քեզ ցանկալի:

Ուռենի կայ մեր պարտէզը
Կայ վարդենի նրա շուքը,
Զոհում ես քու արտասուքը
Ողբերգանքդ է տենչալի:

Խայտանքով հասիր բուրաստան
Որ լինի քեզի ապստան,
Լինիս վարդանոցին մարգպան
Հանգչիր դու ծառին հաճարի:

Առաւօտեան արշալոյսին
Սողալով կը գտնես վարդին,
Փունջ փունջ բացուած վարդանոցին
Ուղղած երգերդ հիանալի:

Կարօտեցել եմ սոխակ ձայնիդ
Դարձիր ծանօթ բուրաստանիդ,
Քաղցրաբանն ես այս Նարեկիդ
Նման վարդիդ ախորժեկի



Ի Մ Չ Ք Ն Ա Ղ

Ինչ ես լուում գեղանի

Հաղարներ տան երանի

Անվեհեր դու անուանի

Քեզ կարօտ եմ իմ չքնաղ:

Վառուում եմ, խորուում եմ, աւաղ կեանքիս շատ
աւաղ:

Միակ իմ սիրելին ես

Հազուագիւտ ցանկալի ես

Հաճելի եզակի ես

Ցոյց տուր լոյսդ իմ չքնաղ:

Վառուում եմ, խորուում եմ, աւաղ կեանքիս շատ
աւաղ:

Ձեռն խնայում ինձ աղջիկ

Կեանքս մաշեմ խաբուսիկ

Սիրահարուած եմ կուսիկ

Խղճայ դու ինձ իմ չքնաղ:

Վառուում եմ, խորուում եմ, աւաղ կեանքիս շատ
աւաղ:

Քեզ տեսնելիս հառաչեմ

Օտարներից կամաչեմ

Մեղքս ինչ է ճանաչեմ

Դժայ խեղճիս իմ չքնաղ:

Վառուում եմ, խորուում եմ, աւաղ կեանքիս շատ
աւաղ:

Նամակովդ իմացայ

Շատ վերքերուդ դիմացայ

Արտասուքով կուրացայ

Ընդունիր ինձ իմ չքնաղ:

Վառուում եմ, խորուում եմ, աւաղ կեանքիս շատ
աւաղ:

Արամեան քաջ տոնմիցն եմ

Գիտցիր քեզ ազգակից եմ

Ցուրտ անդգայ սառոյց չեմ

Գիտեմ ես ինձ իմ չքնաղ:

Վառուում եմ, խորուում եմ, աւաղ կեանքիս շատ
աւաղ:

Համբար լոյսդ ծածկեցիր

Քո սիրով ինձ մաշեցիր

Օտարի ձեռք յանձնեցիր

Ուր է խիղճդ իմ չքնաղ:

Վառուում եմ, խորուում եմ, աւաղ կեանքիս շատ
աւաղ:



Գ Ա Ղ Տ Ն Ի Ք

Դադանիքդ պահիր սրտիդ մէջ

Բաց կը թողնես դառնայ հուր անշէջ

Մի սպասիր կիսուրի քո մէջ

Փորձուածներ կան հազարներով:

Աղամանդեայ քո մատանիդ

Արժան տեսած պահես մատիդ

Մի տխրալի ժամանակիդ

Անընդունակ երևնալով:

Շողէ ներսինդ պահիր մաքուր

Որ չի դառնայ երկսայրի սուր

Արդար խօսքին տան թուք ու մուր

Կսպասենք դեռ շատ օրերով:

Տուր քո սրտին հանգիստ թափօր

Չարչարանքդ կազդէ մէկ օր

Տեսնես փասններդ բոլոր

Քեզ պէս եղած հազարներով:

Նայիր աշխարհիս երեսին

Շուտով կեղծաւորներ լսեն

Բաւական է բերնիդ թռչին

Յաւելուածներ որոնելով:

Իսկապէս անկեղծ մաերիմ

Ճարուիլ չի մի հաւատարիմ

Ես մի կենաց ընկեր ունիմ

Կապրեմ հազար մի դաւերով:

Քանի մէկ մարդը փորձուել է

Կրկին անգամ սխալուել է

Դադանիքը շուտ դուրս տվել է,

Վնասուածներ հարիւրներով:

Դու. ո՞վ «Նարեկ» լաւ իմացիր

Կնիկ մարդուց զգուշացիր

Փոխէ վարքդ բարուն դարձիր

Այս աշխարհն է շատ դարերով:

ՆՈՐ ՏԱՐՈՒ ԱՌԹԻԻ

Հնորհաւոր լինի մեր այս աւանդական սուրբ օրեր

Լոյս առնեն մեր հաւատացեալք և չի կոչուեն հին

կոյրեր

Բաշխուում է սիրոյ համբոյրներ տարածուեն ուրախ,

լուրեր

Ահաւասիկ նոր տարի է կոչվում է բարի կադանդ:

Դո՛ւ լինենք անցկացրած կեանքէն չ'յիշենք դժբախտ օրը

Բարեմաղթենք գէթ բարի բախտ պարգևէ մեզի տէրը,

Ծագէ արևն կենսատու վերանան ստուերները

Ահաւասիկ նոր տարի է կոչուում է բարի կադանդ:

Մկրտութեան սուրբ օրերին կայցելեն մտերիմներ

Հայցելով բարօրութիւններ հաշուում են թշնամիներ,

Բախտի բերմամբ ո՞վ դու Նարեկ որդիդ և բարեկամներ

Օտար երկիր թող չի մնան մաղթէ դու բարի կադանդ:



Բ Ա Խ Տ Ը

(Կրտսեր եղբորը)

Բնութեան հետ կռիւ մղել չի լինի
Շատ դարերից 'ի վեր փորձեր կը լինի,
Համոզուածին գիտակիցներ ով լինի
Խեղճ մարդկանցը ճնշում կը բերէ բախտը:

Անձուկ է լայն աշխարհը դժբախտներին
Խանգարում է հանգիստը գերեալներին,
Բախտը մարդկութիւնից մոլորեալներին
Տայ ասպարէզ խեղճին կը ճնշէ բախտը:

Խեղաթիւը մարդոցը յաճախ պատահի
Ուղղագնացները ոտքը կը սահի,
Ժամանակն է տարբեր ներկայ աշխարհի
Փնտրեմ ջահով ինձնից խուսափի բախտը:

Տոգորուած վշտերից ով պիտի վանի
Չունիմ մի սփոփիչ ինձի պիտանի,
Այնքան ծանր լուծա լեռներ չի տանի
Դարձեալ ժանգոտ սրտիս թուր խփեց բախտը:

Ընկալայ ամեն բարձր եղբայր իմ կրտսեր
Թող լինի բախտաւոր և ազնիւ դստեր,
Միւս անգամին ցանկամ առոյգ մի ուստեր
Ով դու «Նարեկ» հաշտուիր անյաղթ է բախտը:



Զ Ա Տ Ի Կ

Ձառիկ է այս Տէրունական խորհրդաւոր սուրբ օրը,
Հին օրինացն Մովսէսին հրամայած էր Տէրը
Եգիպտացու լծից ազատուելու կամեցաւ էննը,
Ամեն Իսրայէլեան տունը ունենան պատրաստ բաղարջ:

Անդուլ աշխատանք էին եգիպտացոց ստրուկ,
Արձակում էր Փարաոնը հրամաններ խիստ կ'ստրուկ,
Խարխուլ շինութիւններին տալիս էին նրանք նեցուկ
Ուղղուեն Աւետեաց երկիրը Մովսէսը ընկնի առաջ:

Տաւն հարուածով պատժուեցան համայնքն Փարաոնին,
Խիստ յամառ վարուեցաւ չ'թողուլ Իսրայէլեաններին,
Վերջ հարուածով սպանեց հրեշտակ անդրանիկներին
Դիմեց Մովսէսին հեռանան ալ չի նայեն ձախ ու աջ:

Իսրայէլեաններին չի փնտսեց այս հարուածները,
Մորթեն ամեն տունն գառնուկ ներկեն արիւնով
սեամբերը,
Չու ներկելիս այն է օրինակը նշանաբանը
Ճամբորդ օրին կոչուեց պասքա նաև պաշարներ
բաղարջ:

Կենդանարար Փրկիչն մեր իւր յարութեամբ նորոգեց,
Զինաւ ինքն որպէս մի գառ իւր սէրը մեզ հաղորդեց,
Յարեաւ Քրիստոս ի մեռելոց ընդհանուրին տարածուեց,
Խեղճ «Նարեկն եմ» փառաբանեմ Յարութիւնդ մինչև
վերջ:



ԱՂԵՐՍՈՂ ԱԶՔԵՐ

Աղերսող աչքեր ինչով դադարուեն
կրակուած սրտեր ինչպէս զով առնեն
Զիկայ մի միջոց, որ մխիթարուեն,
Պատած է դժբախտ օրերը սրտիս:

Ղերձերս բեռնուած ուր պէտք է տանել
Ծախել ցանկանամ առնող չեմ գտնել
Վաճառեմ աժան չեն ուզում լսել,
Տանջուիլ, տոչորուիլ բաժինն է սրտիս:

Երբէք վախիլ չեմ տանջանքից մահից,
Բայց ես անսատար զրկուած եմ բախտից
Վարակուած մաղձով չեմ փրկուիլ ախտից,
Այսպէս է դէպքը ներհակը սրտիս:

Րոպէ առ րոպէ օրերս սահեն
Մռայլուն աչքերս միշտ կը արտասուեն
Ժպտալ կարող չեմ սիրտս կը գոցուեն,
Խամրացայ ափսոս կեանքիս և սրտիս:

Սիրոյ բաժակը իմ սիրտը վառեց
Ընպեցի կում մի աչքերս արտասուեց
Թշուառ աշխարհ ինձի խիստ ատեց,
Մնաց անկատար թախիժը սրտիս:

Ուրուական կեանքս ինչպէս անց կացաւ
Առոյգ պատկերս շուտով թոշնեցաւ,
Խարխուլ աշխարհին սիրտս կապուեցաւ
Կ'աղերսուեն աչքերս վշտահար սրտիս:

Ղեղաւոր աշխարհ դարձ տուր քո ակնարկ
Կանես անդրադարձ որպէս ճախարակ,
Զենել դադարուել պինտ անիւղ սակ
Նիրհեմ ազատեմ քո խայթից սրտիս:

Ապա նոր աշխարհ բացուի հանդէս գայ
Ինչ կերպ ապրելու միջոց պիտի տայ
Ինձ նման եթէ ապիկար դուրս տայ
Զի լինի լաւ է վերք տայ իմ սրտիս:

Զէ պէտք ասկէ վերջ աշխարհիս փառքը
Օր աւուր կընկնի մարդկութեան վարկը,
Կասեն լուսաւոր դար է ներհակը,
Այս էլ կը բաւ է իմ նիհար սրտիս:

Քառասուն և հինգ եղաւ տարիքս
Թոռմուեց շուտ գոյնս հասաւ կնճիռս,
Նշան տուեց ալեխառն մազերս,
Ընկել եմ ուժից գոյժ տամ իմ սրտիս:

Եկել եմ աշխարհ ես որպէս մի հիւր
Էլ ինչ երջանիկ կանուանենք 'ի զուր,
Կրքերին դարձած գերի ընդհանուր,
Տեսի ինձ խաբուած դարձեալ ցաւ սրտիս:

Րուպ «Նարեկն եմ» կորուցած եռանդս
Անցաւ կեանքիս զարուն փոխուեց վիճակս
Քօղարկուի իմ աղերսող աչքերս
Մնայ անկատար փափագը սրտիս:



Մ Ի Ա Վ Է

Մի կայծ թուաւ սրտիս շտեմարանը,
Պարպեցի՝ ամեն ինչը դարսի դռանը
Մոխիր լինի տունս կենամ վրանը,
Չեմ մոռանայ գիտեմ որդիս միակ է:

Ինչ ընեմ բացօդեայ ապրելուս կեանքը,
Տօթ օրերին ճանչնամ հովանու յարգը,
Ինչիս պէտք է ամբողջ աշխարհիս փառքը
Ցանկամ լաւ պաշտպանել որդիս միակ է:

Արեգակի կիզիչ ճառագայթներին
Ամբողջ մատաղ բոյսերն փնտռուել են,
Հասաւ ցօղն ու անձրև նոր ուժ առել են,
Դիտեմ հեռուն գիտեմ որդիս միակ է:

Կենսատու արևը թէ լոյս չի սփռէ
Ընդհանուր աշխարհին խոպան կը դարձնէ,
Առանց ուսում մարդիկ միենոյն հարցն է,
Չեմ կարող մութ թողուլ որդիս միակ է:

Էապէս վառվում եմ ուսումի տենչով
Աշխատել կատարեալ զարգացման մտքով,
Լինի ազգին պարծանք ազնիւ վարմունքով,
Դնէ հող «Նարեկին» որդիս միակ է:



ՄԵՆ ՄԵՆԵԿ ԵՄ ԵՍ

Մարդս որքան հմուտ լինի նաև որքան զարդացած,
Սխալմունքը մեզ համար է մեր վրայ է ծանրացած
Կան շատերը ինքն իրանցը փրկիստփայ ենթադրած,
Աշխարհիս մէջ անհշանակ անգոր մեն մենակ եմ ես:

Երկրիս ծոցը ամեն ինչով բնութիւնն է կարգադրած,
Չիկայ ոչինչ առանց պէտքի փորձերով է հաստատուած
Աշխատելով բնագէտներ իրենց ուղեղնին պատուած
Խաւար և անվաստակ բան չգիտցող մեն մենակ եմ ես:

Նեղասիրտ մի լինի կեանքս ապա եղիր համբերող,
Ամեն դէպքերում փորձուելիս միթէ չիկայ քեզ յարող
Աշխարհումս երջանիկ ես քանի լոյսը կան վառող,
Փշրուած աշտանակս լոյսին կարօտ մեն մենակ եմ ես:

Մտայող եմ ամբողջ օրով կ'սպասեմ միշտ իմ բախտին,
Բայց ինչ ընեմ արգելքներ է հանդիսանում իմ աստղին
Ցանկարձ եթէ հրաշք լինի գտնեմ ինձի դրախտին,
Տեսնեմ աղջամուղջը շուրջս պատած մեն մենակ եմ ես:

Երևի թէ որևիցէ բանին ես ալ պէտք կը դամ,
Շատ անտեղի խօսելովս հասկացողին վէրը կուտամ
Դիպլոմ չ'առած մարդկանց առաջ գիտնականի ձև կուտամ,
Անխօս ջութակ աննիւթ երգիչ գիտցիք մեն մենակ եմ ես:

Նողկալի է դառել իմ կեանք նաև գետիննէ խրուած,
Ինձի համար մութ աշխարհ է ճակատիս այսպէս գրուած
Պանդխտութեան մէջ մնացած հանգիստս է խանգարուած,
Բանտի խորքերում կաշկանդուած անտէր մեն մենակ եմ ես:

Անփոյթ կերպով ապրելու եմ չունիմ ուրիշ մի հնար,
Բայց ինչ օգուտ անսիրտ գործով մնայ մարդս խիստ թշուառ
Ճնշուած գերդաստանիս ծախսով չունիմ այնքան տուր և առ,
Անխտիր պարզ խօստովանող կ'ասեմ մեն մենակ եմ ես:

Կարկաշելու ձայն է թռչնոց, որ լսում եմ պարտեզից,
Անմիտ ագռու դու սոխակ չես գնայ հեռու վարդենուց
Ծիծեռնակը կողբայ քաղցր հանգիստը խանգարուելուց,
Անվարդ սոխակ, առանց ջուրի երգիչ մեն մենակ եմ ես:

Երազի պէս անցած օրեր անօգուտ է ետ գալ չի,
Երջանկութիւն բառը գիտենք բայց ինչու՞ն է տեսնուիլ չի
Թիթեռը ճրագին պտոյտ գալուց երբէք հանգչիլ չի
Առանց ճրագ այրուող թիթեռ այսօր մեն մենակ եմ ես:

Մնացած կամ օտար երկրում հայրենիքիս կարօտ եմ,
Զօր ու գիշեր անհանգիստ եմ ծովի մէջը նաւորդ եմ
Երկինք և ջուր Տէր ինձ խալսէ ես ամենից յետնորդներմ,
Անհուր անառագաստ ծովով ճամբորդ մեն մենակ եմ ես:

Երանաւէտ կարելի չէ մարդկանց մէջը մշտապէս,
Անցաւոր է ունայն աշխարհ թող մտածենք խորապէս
Մնապարծններ յաջող ձախորդ անցնեն պիտի դռանապէս,
Անմխիթար և կարկաշուն լացող մեն մենակ եմ ես:

Սիրտս է վեհ մտքիս մէջը շատ գործեր եմ երազում,
Անկարող եմ հասակովս ամբողջ ուժս պակասում
Աշխարհիս մէջ մարդկութիւնն է «Նարեկը» չի հակասում,
Մի կողմից մուտք միւս կողմից ելք գործող մեն մենակ չեմ ես:



Գ Ե Ղ Ե Յ Ի Կ

Պեղեցիկս կարօտցել եմ
Տեսնեմ քո ազնիւ նկարդ
Սիրովդ կեանքս մաշել եմ,
Կայ մի աշխարհս նմանդ:

Եղեմական դրախտումն է,
Ով որ քեզի հետ խօսում է
Անուշ խօսքերդ լսում է
Կը ծառայէ միշտ դռանդ:

Համբարաւոր լոյսդ փայլ է
Բոցերդ խեղճերին կայրէ,
Ինձի մութ խաւարից հանէ
Արժանացու լոյս վրանիդ:

Երեսիդ հողը վերացու
Ցուլէ լոյսդ ուրախացու,
Մեռեալ սրտերին զարթեցու
Ճանեցուր դու իրանդ:

Ցուրտ վառուողին չես մօտենայ
Թախանձողին չես ուրանայ,
Գերիտ եմ ինձ մի մոռանայ
Դու չես խնայել հնարդ:

Իմ սիրելիս թանկագին ես
Շատունց է վեր սիրտս գիտես,
Անկեղծ բարեկամս դու ես
Հնչեցուր սիրոյ քնարդ:

Կենաց կենդանութիւն տուող
Խաւար միտքս լուսաւորող
Խեղճ «Նարեկիս» մխիթարող
Քեզ մատաղ չիկայ նմանդ:

Փափագ ունիմ անկեղծօրէն

Մի վառուի ինձ հետ կեղծօրէն,

Ես մի անգոր կազմի տէր եմ

Փրկէ ինձի այս վայրերէն.

Իմ սիրունս կայնիր տեսնեմ

Շնորհք արա հետդ խօսեմ:

Անընդհատ քո սիրոյն գերի

Ձի մնաց ուժ խնդրեմ ների

Նրկրային չես դու եթերի

Տարածէ լոյս խաւարներին.

Իմ սիրունս կայնիր տեսնեմ

Շնորհք արա հետդ խօսեմ:

Փառքդ տեսնողը զարմանայ

Սիրուն տեսքիդ չի դիմանայ

Դրուծիւնդ թէ իմանայ

Հալածէ թշնամիներին:

Իմ սիրունս կայնիր տեսնեմ

Շնորհք արա հետդ խօսեմ:

Առաւօտեան անուշ հովին.

Վարսերդ երեսիդ փռուին

Ամեն շնորհքդ թէ գրուին

Հնար չէ թղթեր ձեռք բերուին.

Իմ սիրունս կայնիր տեսնեմ

Շնորհք արա հետդ խօսեմ:

Գովեմ քեզ քանի կեանք ունիմ

Գիտես թէ ինչ փափագ ունիմ,

«Նարեկ եմ» բարեկամ չունիմ

Սիրտ տու քո հարազատներին:

Իմ սիրունս կայնիր տեսնեմ

Շնորհք արա հետդ խօսեմ:

Սխալմունքը եթէ ճանաչենք եղբայր

Սաղաղ կապրենք աշխարհումս լաւ նայէ,

Որպէս կատարեալ մարդ թէ լինինք արդար

Ձի պակսի հաց քո կարծիքը սխալ է:

Սրուած ենք հոգսերով ինչ կերպ որ ասես

Սաբեբայ գործերով եղբօրդ լացնես,

Սրկէն սխալուած ենք, որ կողմն որ դարձնես

Սղծին դէմ գործիլը գիտցիր սխալ է:

Սնհիմ շէնքին երբէք յոյսդ մի կասի

Մի օր պատահի, որ ընկնես տագնապի,

Սորհուրդ տուր դու փոքրին ուղիղն ճանաչի

Իրենց կրքին հաստատ մնալ սխալ է:

Լոյս աշխարհում այսքան խաւար մնացիր

Հազար միջոցներով փողեր դիզեցիր,

Նղբօրդ արիւնը ամբողջ քամեցիր

Քո պատրաստած պատասխանը սխալ է:

Էակ ենք ամենքս մի հօր զաւակ ենք

Ընդհանուր մարդկութիւնն հարկաւ տի յարգենք,

Կապուած իրարու հետ պէտք է աշխատենք

«Նարեկիս» տեսած երազն էլ սխալ է:



ԿՈԶ ՊԱՆԴԻՏԻ

Կռուճակ պտոյտ կը գաս կապոյտ երկնքում,
Բաց է ճանապարհդ գնայ ուր կամիս,
Փոքր կանգ առ եթէ Աստուած ես սիրում
Հայրենիքիս ինձնից բարե կը տանես:

Կռուճակ կրկնան ես, քաղցր երգող ես,
Կարգով դասաւորուած սրտիս մօտիկ ես:

Որոշ ժամանակին կը թողնես բունդ,
Գնաս հեռու աշխարհ կատարես տօնդ,
Ճանապարհին պատահես բաց բերանդ
Սիրականիս ինձնից բարե կը տանես:

Կռուճակ կոկրան ես, քաղցր երգող ես,
Կարգով դասաւորուած սրտիս մօտիկ ես:

Չունիմ դադար գալիս միտքս ձեզ հետ մէկ
Թեքեր չունիմ թռչեմ սիրտս է բեկ-բեկ,
Պահ մի կացէք կռուճակ հասկացնեմ մէկ-մէկ
Կռուճակ հայրենիքիս շատ բարե տանես:

Կռուճակ կրկնան ես քաղցր երգող ես,
Կարգով դասաւորուած սրտիս մօտիկ ես:

Պատահեցայ ձեր երամին օդն էր մէգ,
Մի գոյգ կռուճակ շեղուել կարգից ընկած խէկ,
Ինձի նման թշուառ անշատուածներ մեղք
Կռուճակ հայրենիքիս շատ բարե տանես:

Կռուճակ կրկնան ես քաղցր երգող ես,
Կարգով դասաւորուած սրտիս մօտիկ ես:

Արագընթաց գնացքովիդ չեք յիշեր,
Երկու ընկեր պակսած ձեզնից այս պիշեր,
Բազէից վերք ստացել են չունին տէր
Կռուճակ լուր տար այսպէս բարե կը տանես:

Կռուճակ կրկնան ես քաղցր երգող ես,
Կարգով դասաւորուած սրտիս մօտիկ ես:

Նամակ գրեմ թեիդ կապեմ յարմար է,
Բայց ձեռքս վերք կարող չեմ արգելեալ է,
Ահա ամբողջ խօսքերս դու գումարէ
Կռուճակ հայրենիքիս բարե կը տանես:

Կռուճակ կոկրան ես քաղցր երգող ես,
Կարգով դասաւորուած սրտիս մօտիկ ես:

Դառնէ պանդուխտ մարդուս կեանքը փորձուած է,
Ժպտալ չի երեսը, սիրտը գոցուած է,
Մահամերձին խեղճի դուռը փակուած է
Կռուճակ պատմիր ինձանից բարե կը տանես:

Կռուճակ կոկրան ես քաղցր երգող ես,
Կարգով դասաւորուած սրտիս մօտիկ ես:

Խոժոռ աչքով նայեն պանդուխտին երես,
Թէկուզ օրը տասն հետ յանցանքին ներես,
Պահանջես իրաւունք հանես ասպարէզ
Մեղը քոնն է կռուճակ բարե կը տանես:

Կռուճակ քոկրան ես քաղցր երգող ես,
Կարգով դասաւորուած կեանքիս մօտիկ ես:

Տասնեակ տարիներով փակուած կամ մի տուն,
Այն էլ վարձուած տնակ շրջեմ երերուն,
Տարին երկու հեղ դու ազատ փոխես բունն
Կռուճակ մինչ Բաբելօն բարե կը տանես:

Կռուճակ կոկրան ես քաղցր երգող ես,
Կարգով դասաւորուած սրտիս մօտիկ ես:

Իմացայ խմբովին ուրախ գնում ես,
Ինձի հարցանողաց բարե հաղորդես,
Պանդուխտ «Նարեկն էլ» անփող սե երես
Ո՞վ կռուճակ ըստ աշմ բարե կը տանես:

Կռուճակ կոկրան ես քաղցր երգող ես,
Կարգով դասաւորուած սրտիս մօտիկ ես:

Ս Ի Վ Տ Ա Մ

(Քերտիկէ)

Սէվտուկիմ եատրմա դուշտի կէջմաղ խէյալմտեն նետան,
Վառուել եմ սիրոյ կրակով անկեղծ է սէրը ինձ գիտեմ.
Պունճէ սըլէթ պանա կէլան ֆարգ էյլէտմքի տօսթմդան
Եղուկ անշատեցին մեզի բայց մի է սրտերնիս գիտեմ:

Էլեմ չեքմանեմ չունքի տար վագտը վարտը պու էանան
Յաջող, ձախորդ, միզ համար է աշխարհումս չենք մնայուն
Աշիքեարէն էլնտէն չէքէրլէր սէնն գաղանտըղըն
Անդորրութիւնն է խանգարուած սիրտդ մաքուր չէ լաւ գիտեմ:

Վարեմ տեսէմ տանիշայլմ արիֆ քիմեսն է պուլամամ,
Ամեն ոք իւր ցաւը ունի իմ վէրքերս ումին բանամ
Գայնայլպ ճօշ էյլար սէվտամ պունտան պօյլէ տայնամամ
Չունիմ հնար եթէ մեռնեմ մեղը ես քեզանից գիտեմ:

Տէրտմայ չարէ պուլմամ տօլաշմամիշ եար գալմատի
Գիւղից-գիւղ, քաղաքից-քաղաք յարմարուիլ չի կլիմայի
Կէզինըպ էիւճէ տաղլարի մէսքեան էյլիտմ պաղլարի
Փչացուց ինձ տօթն ու ցուրտը այն է պատճառը լաւ գիտեմ:

Արշու ալայէ չգարսէ տատու ֆերեատմ էկէրչի,
Գիտեմ առանց տիրոջ կամաց իղձս երբէք կատարուիլ չի
Տաիմ զուրպէթտէ գըսմէթմ էլ գափուստէ տիլէնչի
Թէ մնամ միշտ ապերշանիկ դառն մահն է անուշ գիտեմ:

Մայիլմ հուսնու էիւղընէ քէրիմ գըլ գէլ իհսան էյլա,
Տուր եռանդ իմ նիհար սրտիս, որ նորից կեանքս քաղցրանայ
Կէօրուրսըն արթմագտա սէվտամ չըգարտ քէնտինի զահրա
Թէ քաւէս մեղդ ով «Նարեկ» քո տեղը դրախտն է գիտեմ:



ԵԿ ԻՄ ՆԱԶԵՆԻ

Եկ իմ նազենի խորհուրդ հարցանեմ,
Թէ ասկեց վերջը քեզ հետ միասին
Խաղաղ երջանիկ կեանք տի վայելեմ,
Վերջնական պայման տուր ինձ այս մասին:
Թարմ վարդիտ անուշ հոտիդ գ'մայլեցայ հոգեակս
Արփիական լուսոյ նման նորոգվեցաւ իմ կեանքս:
Կորուցած խելքս ես մինչև հիմակ,
Ընկած վայրերում դարձած էի ծանակ,
Չէի յիշում մինչդեռ զրգէի նամակ
Խնդրում եմ ներել ինձի այս մասին.
Թարմ վարդիտ անուշ հոտիդ գ'մայլեցայ հոգեակս
Արփիական լուսոյ նման նորոգուեցաւ իմ կեանքս:
Ինչու մինչև ցարդ սէրդ չ'զգացի,
Կարծեօք քնած էի նոր աչքս բացի,
Տեսի նուրբ կազմդ լաւ քննեցի
Գիրկդ առած ինձ գոհ եմ այս մասին.
Թարմ վարդիտ անուշ հոտիդ գ'մայլեցայ հոգեակս
Արփիական լուսոյ նման նորոգուեցաւ իմ կեանքս:
Մերթ անուշ խօսքովդ մխիթարես,
Տառապեալ սրտեր դու քաջալերես
Մոլորեալներին ճանապարհ հանես
Մերթ անխիղճներին պատժես այս մասին:
Թարմ վարդիտ անուշ հոտիդ գ'մայլեցայ հոգեակս
Արփիական լուսոյ նման նորոգուեցաւ իմ կեանքս:
Նորաբոյս ծաղիկ անուշ հոտ ունիս,
Գիտեմ չես մերժի ինձի կընդունիս,
Արդէն իմ կենաց մեծ յոյսը դուն ես
Բաղդիս անիւր դարձաւ այս մասին:
Թառմ վարդիտ անուշ հոտիդ գ'մայլեցայ հոգեակս
Արփիական լուսոյ նման նորոգուեցաւ իմ կեանքս:

Ամեն շրջանում գովեստդ լսեմ,
 Թանգ է անունդ մեծաշուք վսեմ,
 Ով իմ նազենի գաղտնիքս ըսեմ
 Ինձ համար աշխարհ մուկ էր այս մասին.
 Թարմ վարդիտ անուշ հոտիդ զմայլեցայ հոգեակս
 Արփիական լուսոյ նման նորոգուեցաւ իմ կեանքս:
 Զուարթ երեսդ տեսնող էակը,
 Սիրուդ զարնուած փռուի դիակը,
 Օր աւուր կաճի սրտիս բորբոքը
 Տուր ինձ եկ հանգիստ խնդրեմ այս մասին.
 Թարմ վարդիտ անուշ հոտիդ զմայլեցայ հոգեակս
 Արփիական լուսոյ նման նորոգուեցաւ իմ կեանքս:
 Եղուկ մինչ հիմակ քեզ չի փնտրեցի,
 Անտարբեր կերպով օրերս վատնեցի,
 Յաւիտեան մէկ տեղ մնալ վճռեցի
 Այս է խորհուրդս խօսք տուր այս մասին:
 Թարմ վարդիտ անուշ հոտիդ զմայլեցայ հոգեակս
 Արփիական լուսոյ նման նորոգուեցաւ իմ կեանքս:
 Նազենի անուն տամ քեզ արժան ես,
 Խանդակաթ գորով դուն ինձի մայր ես,
 Թշուառ խեղճ գերուտ բանտից տի հանես
 Ծառայեմ միշտ քեզ խնդրեմ այս մասին:
 Թարմ վարդիտ անուշ հոտիդ զմայլեցայ հոգեակս
 Արփիական լուսոյ նման նորոգուեցաւ իմ կեանքս:
 Ինչպէս որ իմաստունը յիմարը,
 Նոյնպէս տարբեր է լոյսն ու խաւարը,
 Տան ալ «Նարեկիս» ամբողջ աշփարհը
 Զէ պէտք առանց քեզ գիտցիր այս մասին:
 Թառմ վարդիտ անուշ հոտիդ զմայլեցայ հոգեակս
 Արփիական լուսոյ նման նորոգուեցաւ իմ կեանքս:

ՄՆԱՅ ԽԵՂՃԸ

Մնացած կամ օտար երկրում
 Որոնող մտերիմ չիկայ,
 Վատառողջ կենօք եմ ապրում
 Դրութիւնս հարցնող չիկայ:
 Նեղութիւնս չափից դուրս է
 Գիտեմ որ վերջինս վատ է,
 Խղճատէր չի կայ նկատէ
 Ենեւու ճանապարհ չիկայ:
 Անխիղճների ձեռք մնացի
 Ուղիղ ճանապարհ գնացի,
 Այս պատճառի խեղճ մնացի
 Դրութեանս մտնող չի կայ:
 Յաւս շատ է, որ մէկն ասեմ
 Անյաջող գործով ինձ մաշեմ,
 Կեանքս տապարով կը տաշեմ
 Խղճացող բարեկամ չիկայ:
 Խաբեբայ մարդիկներ շատ են
 Խեղճերի կեանքից ծանօթ չեն,
 Մարդկութիւնը ինձ չի տես
 Այս հաշիւը փնտրող չիկայ:
 Երբոր տարիներս անցան
 Ամբողջ պատիւս կորսուեցան,
 Ընտանիքս ալ մոռացան
 Ոչ մի կողմից փնտրող չիկայ:
 Ղեկը ձեռս պահած լինէի
 Այս աստիճան չէի գլորուէ

Բայց մարդկութիւնն ինչ է գիտէի
Փնտրեմ մարդկանց յետքը չի կայ:

Ճիշտ է կամօքս գնացի
Օտարութեանը դիմեցի,
Գերդաստանի սիրուն գացի
Ոչ մի բարև խաւրող չիկայ:

Ընտեացմէ դժգոհ գտնուող
Օտար տեղերում թափառող,
Ճնշուած եմ ծախսս չեմ կարող
«Նարեկիս» հանգիստ քուն չիկայ:



Ինչով քեզի գոհացում տամ
Այժմ վրդովուած կա սիրտս,
Չեմ խնայի կեանքս զոհ տամ
Նորից բաւական չսիրտս.
Որքան նուրբ ես ախ իմ սիրտս
Չես համբերել աւաղ սիրտս,
Չունիս մխիթարող սիրտս:

Նաւակիկ ես անառագաստ
Արագընթաց և չունիս լաստ,
Խոր ծովերից ունիս իմաստ
Չես երևում աչքի սիրտս:
Որքան նուրբ ես ախ իմ սիրտս
Չես համբերել աւաղ սիրտս,
Չունիս մխիթարող սիրտս:

Չարչարում են քեզ օտարներ
Ստանում ես դու խոր վէրքեր,
Սլանալով բարձր տեղեր
Ճանապարհդ բաց է սիրտս:
Որքան նուրբ ես ախ իմ սիրտս
Չես համբերել աւաղ սիրտս
Չունիս մխիթարող սիրտս:

Պատմիր ցաւդ ինչ է գիտնամ
Որ քեզի կարեկից ըլլամ,
Արտասուներով վէրքդ լըւամ
Ջովացընեմ քեզ իմ սիրտս,
Որքան նուրբ ես ախ իմ սիրտս
Չես համբերել աւաղ սիրտս,
Չունիս մխիթարող սիրտս:

Անցաւոր աշխարհիս մէջը
Պարտաւորուած կընգնիս բոցը,
Շատ դեղ դարմաններով խոցը
Մնաց անբուժելի սիրտս:
Որքան նուրբ ես ախ իմ սիրտս
Ձեռն համբերել աւաղ սիրտս,
Չունիս մխիթարող սիրտս:

Տարուէ տարի յաջողութիւն
Սպասելով նորոգութիւն,
Փոխարէնը դժբախտութիւն
Միշտ անպակաս տեսնես սիրտս:
Որքա՞ք նուրբ ես ախ իմ սիրտս
Ձեռն համբերել աւաղ սիրտս,
Չունիս մխիթարող սիրտս:

Ազատ ժամանակս ներէ
Խորհուրդներդ խելքէս վերէ,
Պատմածդ հազար ցաւեր է
Որ մէկին դարման տամ սիրտս:
Որքան նուրբ ես ախ իմ սիրտս
Ձեռն համբերել աւաղ սիրտս,
Չունիս մխիթարող սիրտս:

Համբերէ սիրտ իմ համբեր է
Տեսնես բախտըդ ինչ կը բերէ,
Օրմը կը խալսես դաւեր է
Հանգիստ եղիր դու իմ սիրտս:
Որքան նուրբ ես ախ իմ սիրտս
Ձեռն համբերել աւաղ սիրտս,
Չունիս մխիթարող սիրտս:

Երբէք խաղաղ քեզ չի տեսայ
Յառաջանքիդ եկայ հասայ,
Մահամերձ ես ինչ էս ըսայ
Ի՞նչ պատահեց քեզ իմ սիրտս:
Որքան նուրբ ես ախ իմ սիրտս
Ձեռն համբերել աւաղ սիրտս,
Չունիս մխիթարող սիրտս:

Յանուած սերմեր փնաց հողում
Շուրջ գան ամպեր հորիզոնում,
«Նարեկը» խիստ մութ գիշերում
Մնաց էլ ինչ յոյս կայ սիրտս:
Որքան նուրբ ես ախ իմ սիրտս
Ձեռն համբերել աւաղ սիրտս,
Չունիս մխիթարող սիրտս:



Բաւական է բախտ անիրաւ հին ծանօթ
Հեռացիր ինձանից հերիք չարչարես,
Էլ ինչ պակաս մնաց հերիք անամօթ
Աշխատանքիս դէմ կառնես զործ խանգարես:

Անխղճաբար հալածանքիդ չափ չ'կայ
Քեզ խնդրել աղերսելը օգուտ չի տայ,
Ներքին թշնամուց գիտեմ խալսել չիկայ
Շատ շատերի խելքը գլխից տարել ես:

Խորհուրդիտ մասնակցողդ ո՞վ է գիտնամ
Աղի արտասուներով ես նրան կիյնամ,
Մինչ գութը շարժուելուն դռանը մնամ
Քաջ գիտեմ անաստուած անխիղճը դուն ես:

Տունս աւերեցիր մնաց ձեռքս ծոց
Ինձպէս քանիսներին տուիր վերք ու խոց,
«Նարեկի» ներսնից կը բռնկուի բոց
Խողանց վզերին դու մարգարիտ շարես:



Զգւելի կեանք թէ հարցանես աշխարհում,
Պանդխտութեան մէջ կը գտնես սիրելիս,
Հայրենիքդ տունդ երբ չի գոհացնում
Մարդուս հեռացնողը հացն է սիրելիս:

Զաւակներից ընտանիքից անջատուած,
Մինչդեռ գործին սէր չունենայ շուարուած,
Ոմանց տեսնի ընտանիքով են խմբուած
Սրտի մէջը վէրք կ'ստանայ սիրելիս:

Վախի մէջն է կասկածանք է թէ կարծիք,
Երբ կուշանայ նամակ, որ ունի կարիք,
Աչքը ճանապարհին մնալ չէ հերիք
Գիշերն ալ անհանգիստ կըլինի սիրելիս:

Անպատճառ կ'աւելնայ գնալով վիշտը,
Պատած նեղութիւններ թէ բերէ բախտը,
Ստանալով նամակ կը փոխուի դէմքը
Շունչ կառնէ բայց կը հառաչէ սիրելիս:

Նորոգվում է տագնապը օտարութեան
Ման կուգայ մտօքը կընկնի նեղութեան,
Գործն էլ թէ չի հասաւ բաւարարութեան
Էլ մի հարց տայ զգլանք է կեանքը սիրելիս:

Քանի որ մարդ հայրենիքում գործ ունի,
Երջանիկ է օրինաւոր կեանք ունի,
«Նարեկը» այս դէպքում միջոց մը չունի
Զոր հաց գտնի դուրս չի գնայ սիրելիս:



Պատանիս մեծ յոյս ունիմ հասնելու
Բայց թէ ժամանակը դեռ չէ հասած չէ,
Այս մօտերը ունիմ լաւ գուշակելու
Բարի երջանիկ օր բայց չէ հասած չէ:

Պէտք է տեսնենք լաւ եղանակ Աստրծով
Ներկայ նեղութեանցը դիմադրենք յոյսով,
Քրիստոնեայ Մեծ Կայսրի արդիւնքով
Շունչ տի քաշենք միայն դեռ չէ հասած չէ:

Աշխատեցանք ոչ մի կարգին չի մտաւ
Քաշուած չարչարանաց հաշիւը կորաւ,
Կողոպուտք աւերմունք պատիւնիս մեռաւ
Հերիք եղաւ բայց թէ դեռ չէ հասած չէ:

Տիրոջ կամօք մեզի պատուհաս տրուած
Մեր մեղքերը քաւուեց էլ բան չի մնաց,
Քանի հզօր Կայսերն մեր դուռն է առած
Մեծ յոյս ունիմ, բայց թէ դեռ չէ հասած չէ:

Ամեն մի գործ իրեն ուղղութիւն ունի
Զ'հասած ժամանակ մի գործ չի տեսնուի,
Համբերանքը կեանքը ամեն տեղ կըսուի
Մի նեղուիլ սիրելիս դեռ չէ հասած չէ:

Կուտամ փառք Տիրոջը հազար այն օրին
Անխիղճների ձեռքէ փրկէ անզօրին
Եղիւր միշտ աղօթող «Նարեկ» Կայսերին
Շատ մօտիկ է, բայց թէ դեռ չէ հասած չէ:



Աշխարհը մի տեսակ կերպարանք մտած,
Կարծես քնած լինի ամենը մէկ է
Լաւն ու վատը ոչ ոք չէն էլ մտածած,
Անիրաւն էլ մէկ է արդարն էլ մէկ է:

Մարդկութիւնն է խաւարի մէջ խարխաւում,
Խելօքներ շատ չ'կան տ'գէտն է բաղում
Բախտի բերմամբ յիմարն ամենքի աչքում,
Թէ յաջող է գործը ամենը մէկ է:

Եթէ այսպէս գնայ աշխարհիս բանը,
Զի տարբերում երբէք կարագն ու թանը
Զի ծախուի մի գնով շաքարն ու աղը,
Ճաշակ չունեցողին ամենը մէկ է:

Նոր օրէնք չի ծնի ամեն մէկի մա,
Կարգ կանոն մարդկութեան թողուած ակամայ,
Յարգանք ու պատիւը մոռցուած է հիմայ
Փող կայ խենթ էլ լինի ամենը մէկ է:

Ընդմիջտ մէջերնիս կայ չի գնահատել,
Թէ հաստին հաստ բարակին բարակ ասել
Արդարութեան բառը լոկ բերնով խօսել,
Ազամանդն էլ մէկ է կայծ բարն էլ մէկ է:

Մնացած է մարդկութիւնը քօղի տակ,
Ապրում ենք միակերպ մէկ մշուշի տակ
Եղանակը փոփոխվում է շարունակ,
Լոյսն ու խաւար մեզի ամենը մէկ է:

Էապէս տարբեր է ներկայ վիճակը,
Դժուար կապրի խեղճն ու ճշմարիտ մարդը
Եղանակը փոփոխվում է շարունակ
Սեւն ու սիպտակ հիմայ ամենը մէկ է:

Կեանքը նաւակ ծովի մէջը լողում է,
 Ենթարկուած վտանգին պատերազմում է
 Վաղ թէ ուշ փոթորկին զոհ գնալու է,
 Կաս չ'կաս ստահակ ամենը մէկ է:
 Էջերում յարամուր խօսուած խնդիրներ,
 Մնացած է թերի հայի վէպիկներ
 Պայծառ օրն էլ մեզ հանդիպեց ամպիկներ,
 Երբ չես հանգիստ «Նարեկ» ամենը մէկ է:



ԵՐԳ ԼԱՐՍԵՆԵԱՅ

Հրակէք հարսին

Պարունն եկաւ ձեզ աւետիք
 Զուարթ օրերուն կը հասնիք,
 Երբոր վարդին բացուած տեսնիք
 Կ'երգեն սոխակներ պարտէզում:
 Քեզ տանենք աղջիկ արի դուն,
 Հոն լինի քու սեպհական տունն

Փիսօն գետը ուժգին հոսէ
 Մեծանալուն խիստ կը խօսէ,
 Շառաչիւնը քաղցր է լսէ
 Գետակներին է ընդունում:
 Քեզ տանենք աղջիկ արի դուն
 Հոն լինի քու սեպհական տունն:

Վարդը բացեց կարմիր գոյնը
 Սոխակը շինեց իր բունը,
 Անուշ հոտից տարաւ քունը
 Գնանք տեսնենք մեր պարտեզում:
 Քեզ տանենք աղջիկ արի դուն
 Հոն լինի քու սեպհական տունն:

Անթառամ ծաղկի նման
 Մլիր ծաղկիր վարդի նման,
 Սիրովդ սոխակի նման
 Երգողին մօտ վարդ ենք տանում:
 Քեզ տանենք աղջիկ արի դուն
 Հոն լինի քու սեպհական տունն:

Զեզ օրհնելով ծնողներդ
 Համոզուած են քո գնալը
 Սիրականիդ մօտ գնալը

Սուրբ պսակով է ընդունվում:

Քեզ տանենք աղջիկ արի դուն

Հոն լինի քեզ սեպհական տունն:

Վառ ճրագին թիթեռները

կատարում են պտույտները,

կը սպասէ քո սիրականը

Ձեռին քնար է չես տեսնում:

Քեզ տանենք աղջիկ արի դուն

Հոն լինի քո սեպհական տունն:

Արի գնանք Աստուած մեզ հետ

կապուեցէք սիրով իրար հետ,

կապրէք երջանիկ նրա հետ

Ուրախ սրտով այս ենք մաղթում:

Քեզ տանենք աղջիկ արի դուն

Հոն լինի քո սեպհական տունն:

Նարեկ



ՕՐԻՈՐԴԻ ԲԵՐԱՆԻՑ ԻՐ ԾՆՈՂՆԵՐԻՆ

Մնաք բարեալ իմ ծնողքներ

կոչուեցայ ես յուսամ ի Տէր

Բաղդիս կոչին ընծայեմ սէր

Հնազանդ եմ սիրով գնալ:

Հայրիկ, մայրիկ, հայցեմ խնամքնիդ հարամ չանէք:

Դստրիկնուդ բախշած ազատ կեանքը հալալ առէք:

Կապոյտ երկինքը կամար է

Այս հանդէսը ինձ համար է

Հայրս մայրս հրամայէ

Ընդունում եմ սիրով գնալ:

Հայրիկ, մայրիկ, հայցեմ խնամքնիդ հարամ չանէք:

Դստրիկնուդ բախշած ազատ կեանքը հալալ առէք:

Ձեռք ու ոտքերնիդ կը պագնեմ

Գորով օրհնութիւննիդ խնդրեմ,

Անհնար է երբ աղջիկ եմ

Խոստանում եմ սիրով գնալ:

Հայրիկ, մայրիկ, հայցեմ խնամքնիդ հարամ չանէք:

Դստրիկնուդ բախշած ազատ կեանքը հալալ առէք:

Ծաղիկ եմ վարդի պէս բացուած,

Ճակատիս ինչոր վիճակուած

Վստահ եմ պայման եմ դրած

Համոզւում եմ սիրով գնալ:

Հայրիկ, մայրիկ, հայցեմ խնամքնիդ հարամ չանէք:

Դստրիկնիդ բախշած ազատ կեանքը հալալ առէք:

Բերէք հարկաւոր շորերս

Պճնում եմ զարդարուեմ նորերս,

Փայլ շղարշը ձգէ մայրս

Պատրաստ լինիմ եարիս գնալ.
Հայրիկ, մայրիկ, հայցեմ խնամքնիդ հարամ չանէք
Դատրիկնուդ բաշխած ազատ կեանքը հալալ արէք:

Անհոգ լինէք հայրս մայրս,
Քոյր ու եղբայր բարեկամս,
Ձեր հաղորդած բոլոր սէրս
Խոստանում եմ յարգով պահել
Հայրիկ, մայրիկ, հայցեմ խնամքնիդ հարամ չանէք.
Դատրիկնուդ բաշխած ազատ կեանքը հալալ արէք:

Տէրը լինի ինձ օգնական
Արժանացուց սուրբ պսակման,
Շնորհքներով զարդարացման
Փորձանքներից ազատ մնալ.
Հայրիկ, մայրիկ, հայցեմ խնամքնիդ հարամ չանէք.
Դատրիկիդ բաշխած ազատ կեանքը հալալ արէք:

Ազնիւ ծնողք մտերիմներ
Մոռանալ չեմ երբէք ձեր սէր,
Յանձնում եմ խնամակալին տէր
Հայցեմ ձեզ երջանիկ մնալ.
Հայրիկ, մայրիկ, հայցեմ խնամքնիդ հարամ չանէք
Դատրիկնուդ բաշխած ազատ կեանքը հալալ արէք:

Գոհ է անարժան դատրիկնիդ
Վայելած է շատ բարիքնիդ
Պակաս չանէք ինձ մաղթանքնիդ
Տիրոջ պատուէրի մէջ մնալ.
Հայրիկ, մայրիկ, հայցեմ խնամքնիդ պակաս չանէք
Դատրիկիդ բաշխած ազատ կեանքը հալալ արէք:

Նարեկ

Ս Է Ր

Սիրոյ յարգը ճանաչողին
Խաղաղ ապրել չիկայ նրան,
Սիրոյ ասպարէզ մտնողին
Հանգիստ քնել չիկայ նրան:

Սէրը, որ մի նուրբ պարգև է
Մարդուս մէջ կը յարատւ է,
Որպէս պահանջ հարկաւոր է
Բնութիւնից տրուի նրան:

Սէրը որոշ սահման չունի
Սէրն է շատ էլ գոյնգոյնի,
Կերպ-կերպ մարդիկներ
Նոյնատեսակ տրուի նրան:

Սէրը եթէ հարազատ է
Սիրտը մաքուր ծաղկած վարդ է,
Ծշմարտախօս հազազիւտ է
Կեանքդ զոհես քիչ է նրան:

Սէրը տեղը թէ չի հասնի
Խոչընդոտներ հանդիսացնի,
Չափից ալ դուրս ցաւ ծընեցնի
Շուտով հասնի մահը նրան:

Սէրը երբեք յաղթւում է
Մարդն է որ սէրը խախտւում է,
Շատ դէպքերու մէջ բարդւում է
Ինչ կերպ, որ կամք կը տաս նրան:

Սէրը զէնք է անյաղթահար
Ուժգին գործածողի համար,
Նա չի գիտեր ձմեռ ամառ
Խորհուրդ տալ չես կարող նրան:

Սէրը երկաթից ամուր է
Երկաթին հուրը հալում է,
Բայց սէրը բոցավառում է
Դժուար է հանգցնել նրան:

Սէրը որքան ըսես մեղմ է
Անուշ խօսքերով գրաւ է,
Շատ թափանցիկ ձուլուող բան է
Կարժէ հաստատ սիրտ տալ նրան:

Սէրը ամեն ինչ գործում է
Ինչոր պէտք է ներգործում է,
Շատ դժուարներ հեշտացնում է
Մօտենում է հեռուն նրան:

Սէրը մի գերբնական ուժ է
Առանց այն մարդ ոչինչ չարժէ,
Ամեն փոթորիկին վարժ է
Փորձողներ յարգում են նրան:

Սէրն է որ գոյութիւն ունի
Սէրն է յաղթող ամեն բանի,
Սէրն է Աստուած ինքն է բարի
Լոյսը մարիլ չ'կայ նրան:

Սէրն է զօրեղ յաւիտենի
Բոլոր ուժով յարգանք չունի
«Նարեկը» պարզ կը դաւանի
Անկար է մոռանալ նրան:



ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Հարկաւոր է տեղեկութիւն
Հայրենիքիս ուր լինելը,
Մէկ-մէկ ձեզի բացատրութիւն
Քաղաքիկ մն է Արդուինը:

Այնտեղ է իմ տունս տեղս
Եղբայրներս բարեկամս,
Հօն թաղած իմ հարս մարս
Հայրենիքս է Արդուինը:

Փիսօն գետն է յորդահոսող
Մեր քաղաքի կողքից վազող,
Բաբերթից մինչ Բաթում համնող
Կոչուած Սև ծովն է կենդրոնը:

Գովաբանելու արժանիք
Չունի ներկայիս մի բարիք,
Թափառական շատ ընտանիք
Դուրս է տուած մեր Արդուինը:

Մօտ է մեզի տաճկասահման
Առևտուրնիս վերաբերման,
Հասցնել չի երբ զոհացման
Պաշտօնում է մեզ Արդուինը:

Ստիպւում են ժողովուրդներ
Ռուսաստան զանազան կողմեր
Հացի խնդրոյն տանել կիներ
Ամայացնել մեր Արդուինը:

Գովելի ջուրն ու հողը
Առողջարար օդն ու ցօղը,
Ջերմից հեռու ցանկացողը
Մնալու է մեր Արդուինը:

Եթէ գործը այսպէս գնայ
 Նորից Արդուինը յետ մնայ
 Գոյնը փոխուի կենդրոնանայ
 Նոր կեանք կընդունի Արդուինը:

Ծանրաբեռնուած գերդաստանով
 Ապրուստ կանեմ առևտուրով
 Մինաս անունս է գրով
 Ծանօթ է ամբողջ Արդուինը:

«Նարեկ» անունս մէջ երգերի
 Տաճկաստանը ինձ կը հերքի,
 Կարին էի ընդ մէջ դէպքի
 Թալանուած եկայ Արդուինը:



ԱՇԽԱՏԱՆՔ

Աշխատանքը մեծ ձայն ունի աշխարհում
 Կեանքը պահիլ հարկաւոր է նրանով.
 Ծոյլը միշտ անպատիւ ամենի աչքում
 Աշխատանքով կեանքը կըլնի ապահով:

Շատ դժուար է ամենեքեան համոզուեն
 Զրիակերութեան քանի որ վարժ են,
 Երբ մնան անօթի բախտից գանգատուեն
 Այնպիսի հետ պէտք է կռուիլ զրահով:

Խելքով հարուստները հնար մտածեն
 Գործ կը բանան ժողովուրդին զարգացնեն,
 Նա խելքով գործում է քեզի կ'աշխատցնեն
 Իրարու հետ պիտի ապրեն խնամքով:

Աշխատիլ բայց սրտով ով որ կը ջանայ
 Ոչ մի բանի երբէք կարօտ չի մնայ,
 Կայք ու կարողութիւն պատիւ կ'ստանայ
 Արհեստովը ոսկեայ ապարանջանով:

Տրտունջներին տեղիք ինչ պէտք է տալու
 Օրավարձդ ունիս միշտ ստանալու,
 Վայրախօսին ծոյլին չէ մտիկ տալու
 Կ'ուզեն քեզ ալ ընկերացնել հնարով:

Արհեստն է օգտակար ամենուս համար
 Առանց այն չի լինի հարուստ թէ անկար,
 Աշխատանքին կարօտ մեղաւոր արդար
 Ամեն մի ճանապարհ հարթուի նրանով:

Նախադուռն է աշխատանքը հարուստին
Պէտք է մարդիկ իւրեանց չափով աշխատին,
Կարգ ու կանոն հարկաւոր է ստեղծին
Պիտի լինի աշխատանքն էլ արհեստով:

Քաղցած քրքէք չի մնայ աշխատողը
Թշուառ կեանք կունենայ շուրջ ապրողը,
Ժլատին «Նարեկ է» արհամարողը
Զափաւորութիւնն է յարգուած ջատագով:

Եւ ինչպէս որ զիսկ աստիճանով
Եւ ինչպէս որ զիսկ աստիճանով
Եւ ինչպէս որ զիսկ աստիճանով
Եւ ինչպէս որ զիսկ աստիճանով



Եւ ինչպէս որ զիսկ աստիճանով
Եւ ինչպէս որ զիսկ աստիճանով
Եւ ինչպէս որ զիսկ աստիճանով
Եւ ինչպէս որ զիսկ աստիճանով

Եւթարդուն է աշխարհը խորունկ

Պէտք է ծաղկիկի իր ծաղիկը աշխարհին:

Կարգ ու կարգն աշխարհը է սուղոթին


Պիտի լիքն աշխարհունն է ստեղծանի

Բացյա՛ն իրենց չի թաղ աշխարհուր

Քանի որ հիւանդ կուսկերն չեն աշխարհը

Փայտին ծաղկիկ է աշխարհաբուր

Աւարտարարիւնն է յարգումը Զոհարարի



20049

